



Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 2 (22)

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2002 թվականի հունիսի 9-ից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	5
Արդյունաբերական մոնոլի հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կանոնները.....	7
ԳՅՈՒՏԵՐ	27, 139
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	29, 141
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	39, 151
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	41, 153
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐ.....	43, 155
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	45, 157
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	49
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	51
ՑՈՒՑԻՉՆԵՐ	129
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	133
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	160

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 ընդհանուր բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 общий отдел
Тел. 561-126 отдел информационных технологий

Internet: <http://www.armpatent.org>
E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ**CONTENTS**

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ	5	LEGISLATIVE AND NORMATIVE DOCUMENTS
Правила оформления, подачи и рассмотрения заявки на промышленный образец	7	Rules of execution, filing and examination of an application for industrial design.
ИЗОБРЕТЕНИЯ	27, 139	INVENTIONS
Сведения о выданных патентах	29, 141	Information on granted patents
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	39, 151	UTILITY MODELS
Сведения о выданных патентах	41, 153	Information on granted patents
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	43, 155	INDUSTRIAL DESIGNS
Сведения о выданных патентах	45, 157	Information on granted patents
ТОВАРНЫЕ ЗНАКИ	49	TRADE MARKS
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	51	Information on registered trade marks and service marks
УКАЗАТЕЛИ	129	INDEXES
СООБЩЕНИЯ	133	REPORTS
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	160	TWO-LETTER CODES

**ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

301.0048.31082000

«Ոչ պաշտոնական հրատարակություն»

Հաստատված է
Հայարտոնագրի պետի
2000թ. օգոստոսի 31-ի
№48 հրամանով

Արդյունաբերական նմուշների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կանոններ

Համառոտագրություններ

Օրենք՝ «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության Օրենք, ընդունված 2000թ. հունվարի 28-ին

Գերատեսչություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտոնագրային վարչություն

Բաժին՝ գերատեսչության ապրանքային նշանների եւ արդյունաբերական նմուշների բաժին

Հայտ՝ արդյունաբերական նմուշի արտոնագիր խնդրարկելու հայտ

Կոնվենցիայով առաջնություն՝ առաջնություն, որը որոշվում է առաջին հայտն արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիային մասնակից որեւէ պետություն ներկայացվելու թվականով

ԱՆՄԴ՝ արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգում (ըստ Լոկարնոյի համաձայնագրի)

Հայտատու՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ում անունով խնդրարկվում է արդյունաբերական նմուշի արտոնագիրը

Սույն կանոնները սահմանված են ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության կանոնադրության 3-րդ կետի եւ «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի 4-րդ եւ 30 հոդվածի 1-ին կետերի պահանջների համաձայն արդյունաբերական նմուշների հայտերի ձեւակերպման եւ ներկայացման, ինչպես նաեւ դրանք քննարկման եւ արտոնագրման հետ կապված հարցերը կարգավորելու նպատակով:

ՄԱՍ 1. Արդյունաբերական նմուշի հայտի ձեւակերպումը եւ ներկայացումը

1.1. Ընդհանուր հասկացություններ եւ դրույթներ

1.1.1. Արդյունաբերական նմուշը

Օրենքի 7 հոդվածի 1 կետի համաձայն, արդյունաբերական նմուշ է համարվում իրի արտաքին տեսքը բնորոշող գեղարվեստականուցվածքային այն լուծումը, որը նոր է, ինքնատիպ եւ արդյունաբերորեն կիրառելի:

1.1.2. Արդյունաբերական նմուշի օբյեկտը (արդյունաբերական նմուշի միասնությունը)

Օրենքի 21 հոդվածի 1 կետի համաձայն, արդյունաբերական նմուշի հայտը պետք է վերաբերի մեկ արդյունաբերական նմուշի եւ կարող է ներառել այդ նմուշի տարբերակները (արդյունաբերական նմուշի միասնության պահանջ), եթե դրանք փոխկապակցված են ընդհանուր (միասնական) գեղարվեստականուցվածքային լուծմամբ եւ ուղղած են նմանատիպ պահանջմունքների բավարարմանը:

Արդյունաբերական նմուշի օբյեկտ կարող է լինել ինչպես առանձին իրի, այնպես էլ իրի մասի, իրի տարբերակների եւ լրակազմի (հավաքակազմի) գեղարվեստականուցվածքային լուծումը:

Իրի մասը կարող է լինել ինքնուրույն պահպանության օբյեկտ, եթե այն կարող է օգտագործվել այլ իրերի հետ եւ ունենալ ինքնուրույն գործառնություն (օրինակ, դռան բռնակը, մեքենայի ցոլալապտերը եւ այլն) ու ավարտուն հորինվածք:

Արդյունաբերական մոնուշի տարբերակները մեկ ֆունկցիոնալ խմբի՝ ԱՆՄԴ մեկ դասին վերաբերող այն գեղարվեստական ուղղվածքային լուծումներն են, որոնք համընկնում են իրենց էական հատկանիշների ամբողջությամբ եւ ունեն ոչ էական հատկանիշների՝ տեսողականորեն ընկալելի տարբերություններ, ընդ որում, վերջիններս ունեն ստեղծագործական բնույթ:

Իրերի լրակազմը (հավաքակազմը) մի միասնական խմբի լուծմանը միտված եւ միասնական գեղարվեստական ուղղվածքային լուծմամբ փոխկապակցված իրերի հավաքածուն է:

1.1.3. Արդյունաբերական մոնուշի տեսակները

Արդյունաբերական մոնուշները կարող են լինել ծավալային կամ տարածական (իրը կամ դրա մանրակերտը), հարթ կամ մակերեսային (գծանկարը) կամ դրանց զուգակցությունը:

Ծավալային (տարածական) արդյունաբերական մոնուշները զարգացած ծավալատարածական լուծում ունեցող հորինվածքներ են (օրինակ՝ հաստոցը, կենցաղային իրերը եւ այլն):

Հարթ (մակերեսային) արդյունաբերական մոնուշները չունեն ծավալ եւ բնորոշվում են տարրերի գծային-գծանկարչական հարաբերակցությամբ (օրինակ՝ գորգերի, գործվածքների գեղարվեստական ուղղվածքային լուծումը եւ այլն):

Իրերի գեղարվեստական ուղղվածքային լուծումները կարող են դառնալ արդյունաբերական մոնուշի հայտի օբյեկտ դրանց նախագծման (էսքիզային, բանվորական), մանրակերտի (ստատիկ, գործող) ստեղծման, արտադրման (փորձնական մոնուշ, սերիական մոնուշ, զանգվածային արտադրության մոնուշ եւ այլն) բոլոր փուլերում, պայմանով, որ այդ լուծումներն ինքնատիպ եւ ավարտուն լինեն:

1.1.4. Արդյունաբերական մոնուշի արտոնագրաունակության պայմանները

Արդյունաբերական մոնուշին ընծեռվում է իրավական պահպանություն, եթե այն արտոնագրաունակ է, այսինքն նոր է, ինքնատիպ եւ արդյունաբերորեն կիրառելի:

Օրենքի 7 հոդվածի 6-րդ կետի համաձայն, արտոնագրաունակ մոնուշներ չեն՝

ա) այն լուծումները, որոնք բացառապես պայմանավորված են իրի տեխնիկական գործառնությամբ:

բ) ճարտարապետության օբյեկտների (բացառությամբ ճարտարապետական փոքր ձևերի) արդյունաբերական, հիդրոտեխնիկական եւ ստացիոնար այլ կառույցների լուծումները:

գ) տպագրական արտադրանքի լուծումները որպես այդպիսին:

դ) հեղուկ, գազաման, սորուն կամ համաման նյութերից պատրաստված, անկայուն ձեւ ունեցող առարկաների լուծումները:

Բացի այդ, Օրենքի 4 հոդվածի 6-րդ կետի համաձայն, իրավական պահպանության ենթակա չեն այն արդյունաբերական մոնուշները, որոնց օգտագործումը հակասում է հասարակության շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին:

Օրենքի 7 հոդվածի 3-րդ կետի համաձայն, արտոնագրմանը չի խոչընդոտում հեղինակի (հայտատուի) կամ նրանից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տեղեկություն ստացած որեւէ անձի կողմից արդյունաբերական մոնուշի էության հրապարակային բացահայտումը (այդ հանգամանքը պետք է ապացուցի հայտատուն), եթե այն կատարվել է արդյունաբերական մոնուշի հայտը ներկայացնելուն նախորդող 6 ամսվա ընթացքում, իսկ ավելի վաղ առաջնություն պահանջելու դեպքում՝ այդ առաջնության թվականին նախորդող 6 ամսվա ընթացքում:

1.2. Հայտի ներկայացումը

1.2.1. Հայտի ներկայացման իրավունք ունեցող անձինք

Օրենքի 18 հոդվածի 1-ին կետի համաձայն, արդյունաբերական մոնուշի հայտը գերա-

տեսչություն է ներկայացնում հեղինակը, գործատուն կամ նրանց իրավահաջորդը (այսուհետև՝ հայտատու):

Արդյունաբերական մոնոլի հեղինակը (համահեղինակները), այսինքն այն ֆիզիկական անձը (անձինք), ում ստեղծագործական աշխատանքով դա ստեղծվել է, իրավունք ունի հայտ ներկայացնել, եթե՝

ա) արդյունաբերական մոնոլը ծառայողական է:

բ) արդյունաբերական մոնոլը ծառայողական է, սակայն՝

1. հեղինակի եւ գործատուի միջեւ կնքված պայմանագրով հեղինակին այդպիսի իրավունք վերապահվում է կամ

2. գործատուն ծառայողական արդյունաբերական մոնոլի ստեղծման մասին հեղինակի կողմից ծանուցվելու թվականից սկսած երեք ամսվա ընթացքում հայտ չի ներկայացնում:

1.2.2. Հայտի ներկայացման կարգը

Հայտը գերատեսչություն ներկայացվում է անմիջականորեն կամ առաքվում է փոստով:

Հայտը կարող է ներկայացվել գերատեսչությունում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով:

Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող ֆիզիկական անձինք եւ օտարերկրյա իրավաբանական անձինք արդյունաբերական մոնոլի արտոնագիր ստանալու եւ այն գործողության մեջ պահելու հետ կապված գործերը վարում են միայն գերատեսչությունում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ կարգ սահմանված չէ:

1.2.3. Հայտի կազմը

Օրենքի 21 հոդվածի 2-րդ կետի համաձայն, արդյունաբերական մոնոլի հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում արտոնագիր ստանալու մասին, որտեղ նշվում են մոնոլի արդյունաբերական անվանումը, հայտատուն (հայտատուները), հեղինակը (համահեղինակները), նրանց բնակության կամ գտնվելու վայրը.

բ) արդյունաբերական մոնոլի նկարագրությունը՝ ներառյալ դրա էական հատկանիշների ամբողջությունը.

գ) իրի, դրա մանրակերտի կամ նկարի լուսանկարների լրակազմը, որը մանրամասն եւ ամբողջությամբ արտահայտում է իրի արտաքին տեսքը.

դ) էրգոնոմիկական սխեման, իրի բաղադրանքների լրակազմը եւ դրա քարտը, ընդհանուր տեսքի գծագրերը, եթե դրանք անհրաժեշտ են արդյունաբերական մոնոլի էությունը հասկանալու համար:

1.2.4. Հայտին կցվող փաստաթղթերը

Արդյունաբերական մոնոլի հայտին կցվում են՝

ա) սահմանված չափով տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերը (վճարման անդորրագրերը եւ անհրաժեշտության դեպքում՝ գերատեսչության սահմանած կարգով ձեւակերպված՝ զեղչով տուրք վճարելու հիմքը).

բ) արտոնագրային հավատարմատարի միջոցով ներկայացվող հայտին կցվում է հայտատուի կողմից տրված եւ նրա իրավասությունը հաստատող փաստաթուղթը (լիազորագիր) կամ դրա հաստատված պատճենը:

Կոնվենցիայով առաջնության իրավունքից օգտվելու ցանկության մասին հայտատուն պարտավոր է նշել հայտը ներկայացնելիս կամ գերատեսչության կողմից այն ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում՝ կցելով առաջնային հայտի պատճենը, կամ ներկայացնել այն՝ հայտը գերատեսչություն ներկայացնելու օրվանից 3 ամսվա ընթացքում: Մի քանի առաջնային հայտերի դեպքում կցվում են դրանց բոլորի պատճենները:

Եթե առաջնային եւ ներկայացված հայտերում նշված են տարբեր հայտատուներ, ապա պետք է ներկայացնել վերջինիս իրավասությունները հաստատող փաստաթուղթ:

1.3. Հայտի նկատմամբ պահանջները

1.3.1. Հայտի լեզուն

Հայտի դիմումը ներկայացվում է հայոց լեզվով:

Հայտի մյուս փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզվով: Այս դեպքում դրանց հայերեն թարգմանությունը, Օրենքի 18 հոդվածի 3-րդ կետի համաձայն,

ա) ՀՀ հայտատուները պարտավոր են կցել այդ փաստաթղթերին.

բ) օտարերկրյա հայտատուները պարտավոր են գերատեսչություն ներկայացնել հայտը ներկայացնելու օրվանից երկամսյա ժամկետում:

1.3.2. Հայտի դիմումը

Հայտի դիմումը ներկայացվում է սույն կանոնների հավելվածում բերված ձևաթղթի տեսքով:

Համապատասխան սյունակում անհրաժեշտ տեղեկությունները չտեղավորվելու դեպքում դրանք բերվում են լրացուցիչ թերթի վրա, դիմումի համապատասխան սյունակում նշելով՝ "տես լրացուցիչ թերթի վրա":

Դիմումի մեջ հայտատուի ներկայացրած ոչ հավաստի տվյալների կամ տեղեկությունների համար գերատեսչությունը պատասխանատվություն չի կրում:

1.3.3. Օրինակների քանակը

Հայտի դիմումը ներկայացվում է երեք օրինակից:

Նկարագրությունը եւ ընդհանուր տեսքի գծագրերը ներկայացվում են երկու օրինակից:

Ընդհանուր տեսքի լուսանկարները ներկայացվում են վեց օրինակից, մյուս լուսանկարները՝ երկուական օրինակից:

Մնացած փաստաթղթերը ներկայացվում են երկուական օրինակից:

Եթե փաստաթղթերը հայերենով չեն կամ պարունակում են այլ լեզվով արված մակագրություններ, ապա նման փաստաթղթերի մեկական բնօրինակից բացի, ներկայացվում են նաեւ դրանց մեկական օրինակը՝ հայերեն թարգմանված տեքստերով եւ մակագրություններով:

1.3.4. Իրի, դրա մանրակերտի, գծանկարի լուսանկարների (կամ այլ արտապատկերումների) լրակազմը

Լուսանկարը իրի արտաքին տեսքը, էական հատկանիշների ամբողջությունն արտահայ-

տող այն հիմնական փաստաթուղթն է, որը պարունակում է դրա մասին պատկերային տեղեկություն եւ թույլ է տալիս որոշել դրա իրավական պահպանության ծավալը:

Լուսանկարները պետք է մանրամասն եւ լրիվ պատկերացում տան իրի արտաքին տեսքի մասին՝ բացահայտելով դրա բոլոր էական հատկանիշները:

Պատկերը լուսանկարի վրա պետք է լինի հստակ եւ պարզ: Արդյունաբերական նմուշի բոլոր մանրամասները պետք է լավ երեւան:

Իրը (դրա մանրակերտը) պետք է լուսանկարել չեզոք հիմնագույնի (ֆոնի) վրա, առանց օտար առարկաների:

Հայտը պետք է պարունակի արդյունաբերական նմուշի սեւ-սպիտակ (եթե գույնը էական հատկանիշ չէ) լուսանկարները դիմացից՝ 3/4 տեսանկյունով (ռակուրսով), ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում՝ տեսքը աջից, ձախից, առջեւից, հետեւից, վերեւից, ներքեւից, հղումային եւ այլ գծագրեր:

Բարդ իրերի համար կարող են ներկայացվել լրացուցիչ ֆրագմենտների մեծացված լուսանկարները:

Հարթ (մակերեսային) նմուշների համար ներկայացվում են դրանց (անհրաժեշտության դեպքում՝ գունավոր) լուսանկարները, որոնցում պետք է ընդգրկված լինի հարթ պատկերի կրկնամախշը (պլանում):

Իրերի լրակազմը (հավաքակազմը) ընդհանուր տեսքի լուսանկարների վրա ներկայացվում է ամբողջությամբ, այսինքն դրա մեջ մտնող բոլոր իրերի ընդգրկմամբ:

Բացառիկ դեպքերում, եթե դրանք լրիվ կազմով չեն կարող ներկայացվել ընդհանուր տեսքի լուսանկարի վրա, թույլատրվում է լրակազմը ներկայացնել հատված առ հատված՝ առանձին լուսանկարների վրա: Բացի այդ, լրակազմի մեջ մտնող յուրաքանչյուր իրը լրացուցիչ ներկայացվում է առանձին լուսանկարի վրա:

Արդյունաբերական նմուշի յուրաքանչյուր տարբերակը ներկայացվում է լուսանկարների լրակազմով (ոչ մեծ իրերը կարող են պատկերվել միասին՝ ընդհանուր տեսքի լուսանկարի վրա):

Այն դեպքերում, երբ գունագծանկարչական լուծումը արդյունաբերական նմուշի էա-

կան հատկանիշներից մեկն է, կցվում է ընդհանուր տեսքի մեկ գունավոր լուսանկար, սլայդ կամ գունային լուծման սխեման:

Փակվող, ծալվող, ձեւափոխվող եւ այլ իրերի համար կցվում են նաեւ դրանց լուսանկարները բաց տեսքով (օրինակ՝ սառնարան, հեռախոսախցիկ) կամ հավաքված տեսքով (օրինակ՝ խոհանոցային կոմբայն, փոշեկուլ):

Մեծ եւ բարդ իրերը ներկայացվում են 18x24 սմ չափերի լուսանկարներով:

Փոքր եւ պարզ իրերը կամ մանրակերտերը (օրինակ՝ շիշ, ժամացույց եւ այլն) կարող են ներկայացվել 9x12 սմ կամ 13x18 սմ չափի լուսանկարներով:

Լուսանկարների հակառակ երեսին հաջորդաբար, վերելից ներքեւ նշվում են լուսանկարի համարը, արդյունաբերական մոնուշի անունը եւ պարզաբանումները հետեւյալ հաջորդականությամբ՝ ընդհանուր տեսք, այլ տեսքեր, գունավոր լուսանկար: Դրանց հետեւում են՝ մանանակի եւ ամենամոտ մանանակի լուսանկարը (ներկայացնելու դեպքում), որոնց հակառակ երեսին նշվում են նաեւ „մանակ“, կամ „ամենամոտ մանակ“, բառերը:

Իրի, դրա մանրակերտի կամ գծանկարի լուսանկարները կարելի է փոխարինել դրանց որակյալ այլ արտապատկերումներով (օրինակ՝ քսերոպատճենով):

Լուսանկարների (այլ արտապատկերումների) լրակազմը պետք է զետեղել առանձին ծրարի մեջ:

1.3.5. Արդյունաբերական մոնուշի նկարագրությունը

Արդյունաբերական մոնուշի նկարագրությունը պետք է բացահայտի իրի՝ լուսանկարների վրա արտապատկերված արտաքին տեսքը:

Արդյունաբերական մոնուշի նկարագրությունը պարունակում է հետեւյալ բաժինները՝

ա) արդյունաբերական մոնուշի անվանումը.

բ) ԱՆՄԴ դասը (դասերը).

գ) արդյունաբերական մոնուշի նշանակությունը եւ օգտագործման բնագավառը.

դ) արդյունաբերական մոնուշի մանանակը (մանանակները), այդ թվում՝ ամենամոտ մանանակը.

ե) արդյունաբերական մոնուշի լուսանկարների եւ մոնուշը պարզաբանող այլ նյութերի

ցանկը (գծագիրը, էրգոնոմիական սխեման, իրի բաղադրանումների լրակազմը եւ դրա քարտը (կոնֆեկցիոն քարտ), եթե դրանք անհրաժեշտ են).

զ) արդյունաբերական մոնուշի էության բացահայտումը.

է) արդյունաբերական մոնուշի բազմակի վերարտադրման հնարավորությունը.

ը) արդյունաբերական մոնուշի էական հատկանիշների ամբողջությունը (ցանկը):

1.3.5.1. Արդյունաբերական մոնուշի անվանումը

Արդյունաբերական մոնուշի նկարագրությունն սկսվում է դրա անվանման նշումով եւ շարադրվում է եզակի թվով:

Արդյունաբերական մոնուշի անվանումը պետք է բնութագրի դրա նշանակությունը եւ համապատասխանի ԱՆՄԴ որոշակի դասի:

Քիչ հայտնի կամ նոր նշանակության արդյունաբերական մոնուշի անվանումը պետք է մատնանշի դրա օգտագործման բնագավառը (օրինակ՝ նոր սերնդի համակարգիչ):

Եթե արդյունաբերական մոնուշն ունի կատարման տարբերակներ, ապա անվանումից հետո տրվում է տարբերակների քանակը, օրինակ՝ “շիշ” (3 տարբերակ):

Եթե իրը ներկայացվում է բաղադրամասերի հետ, դա պետք է արտահայտված լինի վերնագրում (օրինակ՝ դանակ պատյանի հետ):

Եթե ներկայացված արդյունաբերական մոնուշը իրերի լրակազմ (հավաքակազմ) է, ապա դա պետք է արտացոլված լինի անվանման մեջ (օրինակ՝ գործիքների հավաքակազմ):

Օրենքի 8 հոդվածի 6-րդ կետի համաձայն, մինչեւ արտոնագիր տալու մասին որոշման կայացումը, հեղինակն իրավունք ունի անվանակոչել իր ստեղծած արդյունաբերական մոնուշը: Անվանակոչումը (եթե այն չի պարունակում անթույլատրելի տարրեր) կատարվում է հեղինակի դիմումի հիման վրա:

1.3.5.2. ԱՆՄԴ դասերը

ԱՆՄԴ դասով (դասերով) որոշվում է հայտարկվող արդյունաբերական մոնուշի՝ ԱՆՄԴ գործող խմբագրության որոշակի խորագրին (խորագրերին) պատկանելը:

Եթե հայտատուի կողմից որոշված է հայտարկվող արդյունաբերական նմուշի ինդեքսը, ապա այն նշվում է արդյունաբերական նմուշի անվանման կողքին (օրինակ՝ ԱՆՄԴ 09-01-ը նշանակում է, որ այն պատկանում է արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման 6-րդ խմբագրման 09-01 դասին):

Դասակարգման ցուցիչը (ցուցիչները) կարող է (են) ճշգրտվել եւ փոփոխվել փորձաքննության ընթացքում:

1.3.5.3. Արդյունաբերական նմուշի նշանակությունը եւ օգտագործման բնագավառը

“Արդյունաբերական նմուշի նշանակությունը եւ օգտագործման բնագավառը” բաժինը հարկավոր է սկսել հետեւյալ բառերով՝ “Ներկայացվում է արդյունաբերական նմուշի հայտ”, որից հետո բերվում է հայտարկվող արդյունաբերական նմուշի անվանումը, օգտագործման ենթադրվող բնագավառը եւ նշանակությունը, ինչպես նաեւ դրա կիրառման գերադասելի բնագավառը: Նշվում է նաեւ հայտարկվող արդյունաբերական նմուշի գործառնական եւ հասարակայնորեն օգտակար նշանակությունը:

1.3.5.4. Արդյունաբերական նմուշի նմանակը (ները)

“Արդյունաբերական նմուշի նմանակը (ները)” բաժնում նշվում են գոյություն ունեցողներից հայտատուին հայտնի նմանակները, դրանցից արդյունաբերական նմուշին ամենամոտը (ամենամոտ նմանակ) եւ տրվում են դրա (դրանց) բնութագիրը եւ համեմատական բնութագիրը:

Արդյունաբերական նմուշի նմանակները հայտի առաջնության թվականին նախորդող շրջանում հանրամատչելի տեղեկություններից հայտնի դարձած այն գեղարվեստական ուղղվածքային լուծումներն են, որոնք վերաբերում են նույն գործառնական նշանակությունն ունեցող եւ իրենց էական հատկանիշներով հայտարկվող արդյունաբերական նմուշին նման իրերի արտաքին տեսքին:

Ամենամոտ նմանակը հայտարկվող արդյունաբերական նմուշին (կամ դրա տարբերակ-

ներից) էական հատկանիշների ամբողջությամբ ամենամոտ նմանակն է:

Տվյալ բաժնում նշվում են նաեւ տվյալ նմանակները պարունակող տեղեկատվական աղբյուրների մատենագիտական տվյալները:

Տեղեկատվության աղբյուրների մատենագիտական տվյալները տրվում են այնպես, որ դրանցով հնարավոր լինի գտնել տեղեկատվության աղբյուրը, իսկ դրանում՝ կոնկրետ տեղեկությունը:

Եթե որոշման արդյունքում հայտարկվող արդյունաբերական նմուշի նմանակ (նմանակներ) կամ ամենամոտ նմանակ հայտնաբերված չէ, հարկավոր է նշել այդ հանգամանքը:

Սակայն եթե այդպիսիք հայտնի են փորձաքննությանը, հայտատուի համաձայնությամբ դրանք կարող են ներառվել սույն բաժնում եւ դիտարկվել:

Այս բաժնում տրվում են նաեւ հայտարկվող արդյունաբերական նմուշի նմանակների եւ նույն կամ նման նշանակության իրերի ձեւակազմության առանձնահատկությունները եւ գեղարվեստական նախագծման այն բնագավառի զարգացման միտումները, որոնց պատկանում են դիտարկվող իրերը:

1.3.5.5. Արդյունաբերական նմուշի լուսանկարների ցանկը եւ ներկայացված այլ նյութեր

“Արդյունաբերական նմուշի լուսանկարների ցանկը եւ ներկայացված այլ նյութեր” բաժնում հերթով թվարկվում են ներկայացված լուսանկարները (այլ արտապատկերումները), ինչպես նաեւ գծագրերը, գծապատկերները, էրգոնոմիական սխեման, կոնֆեկցիոն քարտը՝ նշված հերթականությամբ եւ համապատասխան համարակալմամբ:

1.3.5.6. Արդյունաբերական նմուշի էության բացահայտումը

«Արդյունաբերական նմուշի էության բացահայտումը» բաժնում մանրամասն բացահայտվում են արդյունաբերական նմուշի այն էական հատկանիշները, որոնք ձեւավորում են իրի արտաքին տեսքը եւ որոշում են արդյունաբերական նմուշի իրավական պահպանության ծավալը: Այս-

տեղ նկարագրվում են դիտարկվող արդյունաբերական նմուշի գեղագիտական եւ էրգոնոմիկական առանձնահատկությունները, որոշվում է էական հատկանիշների ազդեցությունը դրանց ձեւավորման վրա: Պարզաբանվում են իրի եւ դրա մասերի ձեւը եւ փոխդասավորությունը, գույների, նյութերի գուգադրման առանձնահատկությունները եւ այլն:

Այստեղ կարելի է տալ նաեւ հայտարկվող արդյունաբերական նմուշի եւ դրա նմանակների (հատկապես ամենամոտ նմանակի) համեմատական բնութագիրը՝ նշելով դրանց տարբերությունը, հայտարկվող արդյունաբերական նմուշի առանձնահատկությունները եւ առավելությունները, հատկապես սպառողական հատկանիշները, առումով՝ համեմատելով նմանակների հետ:

Տարբերակներ ունեցող արդյունաբերական նմուշի նկարագրության ժամանակ նախ ընդհանրացված ձեւով տրվում են դրանք բացահայտող ընդհանուր հատկանիշները, ապա՝ մի տարբերակը մյուսից զանազանող հատկանիշները:

Բարդ, ծավալային արդյունաբերական նմուշները նկարագրելիս անհրաժեշտ է հակիրճ բնութագրել դրանց աշխատանքը, մասերի եւ մանրամասերի փոխդասավորությունը եւ փոխազդեցությունը (անհրաժեշտության դեպքում վկայակոչելով լուսանկարները, գծագրերը եւ մյուս փաստաթղթերը): Ընդ որում, տեքստում մասերի դիտարկման հաջորդականությունը պետք է համընկնի գծագրերում դրանց համարակալմանը:

Հարթ (մակերեսային) նմուշները նկարագրելիս անհրաժեշտ է նշել դրանց գեղարվեստական գունաերանգավորման առանձնահատկությունները (նշելով ապրանքատեսակը)՝ լուսանկարների վկայակոչումով (ըստ դրանց համարների) եւ բացահայտել դրանց գեղարվեստական ուղղվածքային առանձնահատկությունները (կառուցվածքը, կազմությունը, մշակվածքը, գեղազարդման եւ գծանկարչական առանձնահատկությունները եւ այլն):

Լրակազմը (հավաքակազմը) նկարագրելիս պետք է նշվեն դրա կազմի մեջ մտնող բոլոր տարրերը, որոնք թեւ կարող են իրականացնել միմյանցից տարբեր գործառույթներ կամ ունենալ տարբեր ձեւ ու եզրաչափեր, բայց պետք է կա-

տարված լինեն ձեւակազմության (կերպարային, գեղակերպության եւ ոճային) միասնության սկզբունքի օգտագործմամբ (օրինակ՝ կահույքի լրակազմ, գործիքների հավաքակազմ եւ այլն):

1.3.5.7. Արդյունաբերական նմուշի բազմակի վերարտադրման հնարավորությունը

“Արդյունաբերական նմուշի բազմակի վերարտադրման հնարավորությունը” բաժնում պետք է տվյալներ բերվեն, որոնք հաստատում են առկա արդյունաբերական արտադրության պայմաններում տվյալ արդյունաբերական նմուշի պատրաստման հնարավորությունը, հաշվի առնելով դրա կառուցվածքային առանձնահատկությունները, դրա արտադրության համար օգտագործվող նյութերն ու ծածկույթները, գեղարվեստական մշակման ձեւերը, ձեռքի աշխատանքի կիրառման ծավալը եւ այլն: Ընդ որում, պետք է բացառել եզակի նյութերի եւ միջոցների օգտագործումը:

1.3.5.8. Արդյունաբերական նմուշի էական հատկանիշների ամբողջությունը

“Արդյունաբերական նմուշի էական հատկանիշների ամբողջությունը” բաժինը բառերով ներկայացնում է լուսանկարների վրա արտապատկերված էական հատկանիշների նույնական մեկնաբանումը եւ սահմանում է արդյունաբերական նմուշի իրավական պահպանության ծավալը:

Այն պետք է սկսվի արդյունաբերական նմուշի անվանման նշումով:

Էական հատկանիշները իրի գեղարվեստական ուղղվածքային լուծմանը օբյեկտիվորեն հատուկ այն հատկանիշներն են, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած անհրաժեշտ է, իսկ բոլորը միասին բավարար՝ այդ իրի կոնկրետ տեսողական կերպարը ստեղծելու համար (ինչպիսիք են՝ հորինվածքային տարրերի քանակն ու կազմը, դրանց ձեւը եւ տեղաբաշխումը, պլաստիկ բնութագրերը, կոլորիտը, գծանկարչական, գունային եւ գունագծանկարչական լուծումը, նյութերն ու ծածկույթները եւ այլն):

Էական հատկանիշների ցանկի մեջ ներառվում են նկարագրության մեջ բերված եւ արդյունաբերական նմուշի բացահայտման ժամա-

նակ օգտագործված հասկացություններով տրված այն բոլոր հատկանիշների հակիրճ եւ ստույգ նկարագրությունը, որոնք բնութագրում են իրի արտաքին տեսքը եւ հանդիսանում են գեղարվեստական ռուցվածքային լուծման արդյունք:

Այդ հատկանիշները պետք է համապատասխանեն լուսանկարների տեղեկատվական բովանդակությանը, բայց ոչ փոխարինվեն վերջիններով (չվկայակոչելով դրանք, եթե առանց դրա հնարավոր է բնութագրել արդյունաբերական նմուշը): Էական հատկանիշները շարադրվում են այնպես, որ նկարագրում են իրի ստատիկ վիճակը, իսկ ձեւափոխվելու հնարավորությունը նշվում է առանձին:

Արդյունաբերական նմուշի էական հատկանիշների ցանկը պետք է ունենա հիերարխիկ կառուցվածք՝ առավել կարելուրից դեպի նվազ կարելուրը:

Այդ հատկանիշների շարադրանքը պետք է ձեւակերպվի այնպես, որ այն միանշանակ ընկալվի մասնագետի կողմից եւ ունենա միասնական տերմինաբանություն:

Արդյունաբերական նմուշի տարբերակներ պարունակող հայտը ներկայացնելիս ընդհանուր էական հատկանիշների թվարկումից հետո նշվում է՝

Առաջին տարբերակը բնութագրվում է (այնուհետեւ թվարկվում են հատկանիշները)

N-րդ տարբերակը բնութագրվում է

Գեղարվեստական ռուցվածքային լուծման տարբերակայնությունը որոշվում է ստեղծագործական բնույթ կրող հատկանիշներով:

Նկարագրությունը պետք է ստորագրվի հեղինակի (հավատարմատարի) կողմից:

1.3.6. Գծագրեր, սխեմաներ

Ընդհանուր տեսքի եւ/կամ եզրաչափքային եւ այլ գծագրերը, հարմարակազմության սկզբունքային սխեման ներկայացվում են այն դեպքերում, երբ դրանք անհրաժեշտ են արդյունաբերական նմուշի էության բացահայտման համար:

Եթե ներկայացվող արդյունաբերական նմուշի հայտը վերաբերում է էրգոնոմիական մշակում պահանջող իրին, ներկայացվում է նաեւ դրա էրգոնոմիական սխեման:

Գծագրերը եւ սխեմաները պետք է ճշգրիտ համապատասխանեն նկարագրության տեքստին:

Գծագրերը կատարվում են տեխնիկական գծագրերի պատրաստման կանոններին համապատասխան:

Գծագրերի կամ սխեմաների վրա նշվում են իրի (դրա տարբերակների, լրակազմի կամ հավաքակազմի մաս կազմող իրերի) եւ իրի մասերի առարկայատարածական կազմակերպումը բնութագրող եզրաչափքերը (կառավարման եւ տեղեկատվության արտացոլման միջոցների, աշխատանքային մակերեսների բարձրությունը, լայնությունը, տեղաբաշխման խորությունը, կառուցվածքի՝ իրար մոտ տեղաբաշխված տարրերի միջեւ հեռավորությունը եւ այլն), որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել մարդու աշխատանքային գործունեության գործառնական գոտում հիմնական տարրերի դասավորության եւ իրի շահագործման հարմարավետության մասին:

Հանգույցները, մանրամասերը (եւ այլն) գծագրերի եւ սխեմաների վրա նշվում են նույն արաբական թվանշաններով (վկայակոչման համարներ), ինչ նկարագրության մեջ: Միեւնույն հանգույցը կամ մանրամասը տարբեր գծագրերում (սխեմաներում) նշվում են միեւնույն թվանշանով: Վկայակոչման նշումները, որոնք նկարագրության մեջ հիշատակված չեն, չեն նշվում նաեւ գծագրերում (սխեմաներում) եւ հակառակը: Ընդ որում, ցանկալի է պահպանել հերթական համարակալման սկզբունքը:

Գծագրերի վրա դուրս բերման գծերը պետք է հստակ լինեն: Չի թույլատրվում թվային եւ տառային նիշերը դնել փակագծերի, շրջանակների եւ չափերտների մեջ:

Գծագրերը (սխեմաները) չպետք է պարունակեն որեւէ մակագրություն, բացառությամբ "բաց է", "փակ է", "կտրվածք ըստ ..." կամ "հատվածք ըստ ..." եւ նման այլ արտահայտությունների:

Որպես կանոն, գծագրերի վրա պատկերները ներկայացվում են ուղղանկյուն (օրթոգոնալ) պրոյեկցիաներով (տարբեր տեսքերով, կտրվածքներով եւ հատվածքներով): Ակներեւության համար թույլատրվում է իրը լրացուցիչ ներկայացնել

առանցքաչափական (աքսոնոմետրական) պրոյեկցիայով:

Գծագրերի վրա յուրաքանչյուր տարր պետք է համամասն լինի մյուս տարրերին, բացի այն դեպքերից, երբ որեւէ տարրի հստակ պատկերման համար անհրաժեշտ է համամասնությունների խախտում:

Գծագրի մի թերթի վրա կարելի է զետեղել մի քանի պատկեր՝ դրանց հստակ սահմանազատմամբ:

Եթե երկու կամ ավելի թերթերի վրա զետեղված պատկերները կազմում են միասնական պատկեր, ապա դրանք պետք է դասավորել այնպես, որ իրի ամբողջական պատկերը հնարավոր լինի կազմել առանց որեւէ մաս կամ տարր բաց թողնելու:

Գծագրի թերթի կամ թերթերի վրա առանձին պատկերները ցանկալի է զետեղել առավելազույն հազեցվածությամբ, իսկ էրգոնոմիական սխեմայի վրա տալ տվյալ իրի (մասի, հանգույցի) սխեմատիկ պատկերը:

Յուրաքանչյուր գծագիր (սխեմա) համարակալվում է "պատկեր" անվանմամբ (օրինակ՝ պատկեր 1, պատկեր 2 եւ այլն) անկախ պատկերի ձեւից, նկարի շարադրանքի հերթականությանը համապատասխան:

Գծագրի յուրաքանչյուր թերթի վերելի աջ անկյունում նշվում է հայտարկվող արդյունաբերական նմուշի անվանումը:

1.3.7. Իրի բաղադրանումուշների լրակազմը եւ դրա քարտը (կոնֆեկցիոն քարտ)

Անհրաժեշտության դեպքում (փորձաքննության պահանջով) թեթեւ արդյունաբերության արտադրանքի համար հայտի նյութերի կազմում ներկայացվում են իրի արտադրության համար առաջարկվող կտորի, գործվածքի, կաշվի, օժանդակ նյութերի եւ պարագաների, զարդարանքների (եւ այլնի) նմուշների լրակազմը (կոնֆեկցիոն քարտի տեսքով):

Դեկորատիվ նյութերի, գորգերի, գործվածքների նմուշները ներկայացվում են գծանկարի կրկնամախշի տեսքով:

1.3.8. Տեքստերի ոճը, օգտագործվող տերմինները եւ նշանակումները (պայմանական նշաններ)

Տեքստերի ոճական մշակումը պետք է լինի ոչ շատ ազատ եւ նկարագրական, ոչ էլ խիստ կանոնակարգված ու ճշգրիտ: Սակայն բոլոր դեպքերում դա պետք է լինի հստակ, բայց ընդգրկուն, առանց ավելորդաբանությունների եւ կրկնությունների: Ոճի ընտրությունը, նկարագրության խորությունը ու ճշգրտությունը մեծապես կախված է դիտարկվող իրի եւ դրա գեղարվեստական ուղղվածքային լուծման բնույթից: Նկարագրությունը եւ էական հատկանիշների ցանկը կազմելիս իրի արտաքին տեսքի նույնականացման համար պետք է օգտվել երկրաչափական պատկերների եւ տարածական մարմինների ընդունված անվանումներից, էրգոնոմիկայում, գեղագիտական նախագծման ոլորտում եւ գիտության ու տեխնիկայի բնագավառում ընդունված արտահայտություններից, ստանդարտացված եւ այլ տերմիններից ու կրճատումներից: Եթե դրանք դեռեւս չայն կիրառում չեն գտել կամ մասնագիտական են, առաջին անգամ օգտագործվելիս պետք է լուսաբանվեն (բացատրվեն):

Տերմինների մի քանի տարբերակներից կամ թարգմանություններից պետք է ընտրել առավել գործածվողը եւ հասկանալին, հակառակ դեպքում կարելի է ընտրել միջազգային տերմինը, եթե դա հայերենում եւս ընդունված է (աշխատելով խուսափել օտար տերմինների օգտագործումից, եթե կան դրանց հայերեն ընդունված եւ հասկանալի համարժեքները):

Պետք է պահպանել տերմինների միասնականությունը, այսինքն նույն հասկացությունների եւ հատկանիշների բնութագրման միատեսակությունը: Սա պետք է վերաբերի նաեւ ֆիզիկական, մաթեմատիկական կամ այլ տեխնիկական մեծությունների չափողականությանը եւ համապատասխանի միավորների միջազգային համակարգին:

Տեքստը կամ արդյունաբերական նմուշի անվանումը կարող է պարունակել լատինական այբուբենի նշաններ, պայմանական նշաններ եւ արաբական թվեր:

Իրերի կամ նյութերի մակնիշների, տեսակների, տիպարների պայմանական նշանները պետք է վերծանվեն:

1.3.9. Արտահայտություններ, որոնք օգտագործման ենթակա չեն

Հայտի նյութերը չպետք է պարունակեն այլ անձանց անունով պահպանվող առարկաների (օբյեկտների) արժանիքների վերաբերյալ արհամարհական, բարոյականությանը հակասող արտահայտություններ, հայտարկվող արդյունաբերական նմուշին չվերաբերող տեղեկություններ կամ արտահայտություններ:

1.4. Հայտի փաստաթղթերի ձևակերպումը

Հայտի բոլոր փաստաթղթերը (բացի լուսանկարներից) ներկայացվում են մեքենագրված կամ համակարգչային շարվածքով 210x297մմ չափսի (A 4), որակյալ սպիտակ թղթի վրա (առնվազն 80 գ/քառ.մ տեսակարար կշռով): Գծագրերի բնօրինակը թույլատրվում է ներկայացնել այլ չափսի, այլ տեսակի թղթի (օրինակ, մոնաթղթի) վրա: Լուսանկարները պետք է ներկայացնել փայլատ լուսանկարչական թղթի վրա:

Փաստաթղթերը ձևակերպվում են այնպես, որ հնարավոր լինի դրանց երկարատես պահպանումը եւ անսահմանափակ քանակով պատճենահանումը:

Նկարագրության յուրաքանչյուր թերթը օգտագործվում է միայն մեկ կողմից, տողերը դասավորվում են թերթի կարծ կողմին զուգահեռ:

Հայտի յուրաքանչյուր փաստաթուղթը ներկայացվում է առանձին թերթի վրա:

Նկարագրության թերթերը պետք է ունենան հետևյալ չափերի եզրային դաշտեր՝

վերելից	20մմ
աջից	10մմ
ձախից եւ ներքելից	20մմ-ից ոչ պակաս:

Գծագիր կամ նկարների արտապատկերներ պարունակող թերթերի օգտակար մակերեսը չպետք է գերազանցի 170 x 260 մմ-ը: Դրանց դաշտերը պետք է ունենան հետևյալ նվազագույն չափերը՝

վերելից	25մմ
ձախից	25մմ
աջից	15մմ
ներքելից	10մմ:

Հայտի յուրաքանչյուր փաստաթղթի երկրորդ եւ հաջորդ թերթերը համարակալվում են արաբական թվանշաններով:

Փաստաթղթերի տեքստը պետք է տպագրվի, պահպանելով երկու միջակայք, մեծատառերի նվազագույն բարձրությունը պետք է լինի 2,1մմ:

Տառագրական խորհրդանիշերը, լատինական եւ հունական տառերը կարող են ներգրվել ձեռքով, սեւ գույնի թանաքով, մածուկով կամ տուշով:

Գծագրերը կատարվում են սեւ չջնջվող գծերով՝ տուշով, մածուկով եւ հստակ երեւացող նրբագծերով:

Գծային պատկերների չափագծերը եւ հստակությունն ընտրվում են այնպես, որ չափերի միջեւ, մինչեւ 2/3 գծային փոքրացմամբ բազմացնելու դեպքում, հնարավոր լինի տարբերել բոլոր մանրամասերը:

ՄԱՍ 2. Արտոնագիր ստանալու համար գերատեսչության հետ գործերի վարումը

2.1. Ներկայացուցչի նշանակումը

Արդյունաբերական նմուշի հայտով գործերը վարելու եւ հայտի քննարկման ընթացքում իր շահերը ներկայացնելու համար, հայտատուն կարող է նշանակել ներկայացուցչի՝ նրան տալով սույն կանոնների 1.2.2 կետով նախատեսված պահանջներին համապատասխան ձևակերպված լիազորագիր:

Լիազորագիրը կարող է ներկայացվել հայտի հետ կամ գործավարության ընթացքում, որը կցվում է հայտին:

Մինչեւ լիազորագիր ներկայացնելը ներկայացուցչի կողմից կատարվող գործողությունները համարվում են անվավեր եւ փորձաքննության ընթացքում հաշվի չեն առնվում:

Ներկայացուցչի ցանկացած գործողություն՝ նրան տրված լիազորությունների շրջանակներում կամ նրա նկատմամբ գերատեսչության ցանկացած գործողություն ունի նույն հետեւանքները, ինչ հայտատուի գործողությունը կամ հայտատուի նկատմամբ կատարված գործողությունը:

Ներկայացուցությունը վավերական է մինչև լիազորագրում նշված լիազորությունների սպառումը կամ դրա գործողության ժամկետի ավարտը:

Լիազորագրով տրված լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կարող է կատարվել հայտատուի կամ նրա իրավահաջորդի կողմից գերատեսչություն ներկայացված դիմումի համաձայն (լիազորագրի վերացում):

2.2. Գրագրության իրականացումը գերատեսչության հետ

Հայտը գերատեսչություն է ներկայացնում հայտատուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը, որի հետ էլ տարվում է հետագա գրագրությունը, յուրաքանչյուր հայտի համար առանձին:

Հայտի հանձնումից հետո ներկայացված հետագա նյութերը պետք է պարունակեն հայտի նյութերի մոտից համարը, իսկ հայտի համարը հայտնի լինելու դեպքում՝ հայտի համարը: Ներկայացվող նյութերն ստորագրում է հայտատուն:

2.3. Հայտի նյութերի ներկայացման ժամկետները եւ առաջնության թվականի որոշումը

Արդյունաբերական մոնոլի առաջնությունը որոշվում է հայտը գերատեսչություն ներկայացնելու թվականով, եթե Օրենքի 22 հոդվածի 1 կետի 2-րդ ենթակետի համաձայն, արդյունաբերական մոնոլի հայտն առնվազն պարունակում է հայտատուի անունը (անվանումը), դիմում արտոնագիր ստանալու մասին, արդյունաբերական մոնոլի լուսանկարները, նկարագրություն համարվող նյութերը:

Հայտի քննարկման ընթացքում հայտատուի կողմից ուղղված (ճշգրտված) նյութերը ներկայացվում են Օրենքով սահմանված ժամկետներում: Եթե այդ ժամկետն արտահայտվում է "... ընթացքում (ոչ ուշ..., մինչև ... լրանալը ..., մինչև ... թվականը)" բառակապակցություններով, ապա հաշվարկն սկսվում է նշված թվականին հաջորդող օրվանից: Եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային է, ժամկետի ավարտի օրը համարվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Եթե ժամկետի ավարտը հանդնկնում է համապատասխան օրը չունեցող

ամսվա հետ, ժամկետը համարում են ավարտված այդ ամսվա վերջին օրը:

Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ նույնական արդյունաբերական մոնոլներն ունեն առաջնության միեւնոյն թվականը, ապա արտոնագիրը կարող է տրվել այն հայտով, որն ունի գերատեսչություն ավելի վաղ առաքման թվականի ապացույց: Այդ թվականները հանդնկնելու դեպքում, հայտատուների համաձայնությամբ, նրանց տրվում է մեկ արտոնագիր: Համաձայնության չգալու դեպքում հարցը լուծվում է դատական կարգով:

Առաջնությունը կարող է որոշվել առաջին հայտն արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիային մասնակից որեւէ պետություն ներկայացնելու թվականով (կոնվենցիայով առաջնություն), եթե արդյունաբերական մոնոլի հայտը գերատեսչություն է ներկայացվել նշված թվականից վեց ամսվա ընթացքում:

Առաջնությունը կարող է որոշվել լրացուցիչ նյութերն ստանալու թվականով, եթե դրանցով ձեւակերպված նոր հայտը ներկայացվել է երեք ամսվա ընթացքում, սկսած այն ծանուցագրի ստացման օրվանից, որով հայտատուն տեղեկացվել է, որ սկզբնական հայտի նյութերում նկարագրված լուծման էությունը փոփոխելու պատճառով լրացուցիչ նյութերը հաշվի չեն առնվելու:

Առաջնությունը կարող է որոշվել նույն հայտատուի ավելի վաղ ներկայացված նույն արդյունաբերական մոնոլի էությունը բացահայտող հայտի ներկայացման թվականով, եթե հայտը, որով պահանջվում է այդպիսի առաջնություն, գերատեսչությունն ստացել է ավելի վաղ ներկայացված հայտի գրանցման օրվանից սկսած տասներկու ամսվա ընթացքում: Այդ դեպքում ավելի վաղ ներկայացված հայտը համարվում է հետ կանչված:

Հայտի առաջնությունը չի կարող որոշվել այն հայտի ներկայացման թվականով, որով արդեն պահանջվել է ավելի վաղ առաջնություն:

Արդյունաբերական մոնոլի զատված հայտի (որը ձեւավորվել է սկզբնական հայտից, այն առանձնացնելու հետեւանքով) առաջնությունը որոշվում է սկզբնական հայտի ստացման թվականով, եթե զատված հայտը ներկայացվել է մինչև

սկզբնական հայտով արտոնագիր չտալու մասին որոշման ընդունումը, իսկ արտոնագիր տալու մասին որոշման դեպքում, ոչ ուշ, քան արդյունաբերական սեփականության օբյեկտի պետական գրանցումը:

2.4. Հայտատուի նախաձեռնությամբ հայտի մեջ լրացումներ, ճշգրտումներ, ուղղումներ եւ փոփոխություններ կատարելը

Օրենքի 30 հոդվածի 7-րդ կետի համաձայն հայտատուն հարցման հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ իրավունք ունի մինչեւ փորձաքննության ավարտը, եթե հայտ ներկայացնելիս նա չի հրաժարվել այդ իրավունքից, լրացումներ, ճշգրտումներ եւ ուղղումներ կատարել հայտի նյութերում՝ չփոփոխելով ներկայացված արդյունաբերական մոնլի էությունը:

Այս դեպքում, լրացուցիչ նյութերը համարվում են արդյունաբերական մոնլի էությունը փոփոխող, եթե դրանք պարունակում են հայտի նկարագրության մեջ մտցնելու ենթակա էական հատկանիշներ, որոնք առկա չեն եղել հայտի սկզբնական նյութերում: Լրացուցիչ նյութերի այն մասը, որը փոփոխում է ներկայացված արդյունաբերական մոնլի էությունը, փորձաքննության ընթացքում հաշվի չի առնվում եւ հայտատուն այն կարող է ձեւակերպել որպես առանձին հայտ:

Փոփոխություններն ու ճշգրտումները կարող են կատարվել փոխարինող թերթեր կամ լուսանկարներ ներկայացնելու միջոցով՝ հայտի համապատասխան փաստաթղթի յուրաքանչյուր օրինակի համար առանձին: Հայտի թերթերը կարելի է փոխարինել նորերով մեւ փաստաթղթի ցածր որակի դեպքում, մասնավոր, եթե դա կարող է ազդել բազմացման հնարավորության վրա: Այն դեպքերում, երբ ուղղումները վերաբերում են վրիպակներին, ոճական եւ խմբագրական սխալներին, եթե դրանք հայտնաբերված են հայտատուի կողմից, ուղղումները կարելի է կատարել մինչեւ որոշում կայացնելը, առանց փոխարինող թերթեր ներկայացնելու:

Եթե հայտի քննարկման ընթացքում փոփոխվել է, օրինակ, հայտատուի անունը (անվանումը), հասցեն կամ կատարվել է արտոնագիր ստանալու իրավունքի զիջում, ապա հայտի նյու-

թերում փոփոխություններ կատարելու համար բացի դիմումից պետք է ներկայացնել սահմանված կարգով ձեւակերպված եւ վավերացված համապատասխան փաստաթուղթը (օրինակ, զիջման փաստաթուղթը):

2.5. Հայտի քննարկումը հայտատուի մասնակցությամբ

Արդյունաբերական մոնլի հայտի հետ կապված հարցերի քննարկումը հայտատուի (նրա ներկայացուցչի) մասնակցությամբ անցկացվում է գերատեսչության առաջարկությամբ կամ հայտատուի խնդրանքով, այն բանից հետո, երբ երկու կողմերն էլ ծանոթացել են այդ հարցերին: Փորձաքննության հարցերը կարող են շարադրվել հարցման մեջ, որտեղ լրացուցիչ նշվում է համատեղ քննարկման նպատակահարմարությունը, իսկ հայտատուի հարցերը՝ համատեղ քննարկում անցկացնելու մասին դիմումի մեջ:

Հարցմանը հայտատուն պատասխանում է Օրենքով նախատեսված ժամկետում, անկախ նրանից, մտադիր է մասնակցել հայտի քննարկմանը, թե ոչ:

Հայտի քննարկման օրն ու ժամը նախօրոք համաձայնեցվում է: Հանգամանքների փոփոխության դեպքում այն կողմը, որը հնարավորություն չունի նշանակված ժամին մասնակցել հայտի քննարկմանը, անհապաղ այդ մասին տեղեկացնում է մյուս կողմին:

Եթե Հայարտոնագիրը կամ հայտատուն հայտի համատեղ քննարկումը համարում են վաղաժամ կամ ոչ նպատակահարմար, ապա Հայարտոնագրի առաջարկությունը կամ հայտատուի խնդրանքը կարող է մերժվել:

Հայտատուի ներկայացուցիչը կարող է մասնակցել հայտի քննարկմանը սույն կանոնների 2.1 կետի պայմանները պահպանելու դեպքում:

2.6. Պահանջված նյութերի ներկայացման ժամկետի երկարաձգումը եւ բաց թողնված ժամկետների վերականգնումը

Գերատեսչության հարցմամբ պահանջված նյութերի ներկայացման ժամկետը կարող է երկարաձգվել հայտատուի գրավոր դիմումի համաձայն, ոչ ավելի, քան 6 ամսով:

Դիմումին կցվում է այն ներկայացնելու համար սահմանված տուրքի վճարման անդորրագիրը:

Բաց թողնված ժամկետի վերականգնման մասին խնդրագիրը կարող է ներկայացվել նշված ժամկետի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Եթե այդ ժամկետը խախտվում է, կամ խնդրագրին վճարման անդորրագիր չի կցվում, ապա խնդրագիրը համարվում է չներկայացված:

Բաց թողնված ժամկետի երկարաձգման կամ այն մերժելու մասին հայտատուին ծանուցվում է:

Օրենքի 37 հոդվածի 1-ին մասին համապատասխան կարող են վերականգնվել հայտատուի կողմից բաց թողնված հետևյալ ժամկետները՝

ա) փորձաքննության ընթացքում պակաս կամ ուղղված փաստաթղթերի ներկայացման ժամկետը.

բ) փորձաքննության հարցմանը համապատասխան ներկայացված լրացուցիչ նյութերի ներկայացման ժամկետը.

գ) փորձաքննության որոշման դեմ առարկություն ներկայացնելու ժամկետը.

դ) փորձաքննության որոշման մեջ նշված փաստաթղթերի պատճենները պահանջելու ժամկետը:

2.7. Հայտի հետ կանչումը եւ արտոնագրից հրաժարումը

Հայտատուին, Օրենքի 33 հոդվածի համաձայն, մինչեւ արդյունաբերական նմուշի պետական գրանցումը, իրավունք ունի դիմում ներկայացնել հայտը հետ կանչելու մասին եւ հրաժարվել արտոնագիր ստանալու իրավունքից:

Հայտը համարվում է հետ կանչված այդ մասին ծանուցագիրը հայտատուին ուղարկելու թվականից:

Հետ կանչված հայտը չունի որեւէ իրավական հետեւանք, այսինքն որեւիցե իրավաբանական նշանակություն ունեցող գործողություն այդպիսի հայտով չի կարող այլեւս կատարվել եւ հայտատուի իրավունքները հետագայում չեն կարող հիմնվել այդ հայտի վրա (մասնավորապես՝ հաջորդ հայտը ներկայացնելիս չի կարելի առաջնություն խնդրարկել հետ կանչված հայտի կամ դրա վերաբերյալ լրացուցիչ նյութերի ներկայացման թվականով):

2.8. Փորձաքննության որոշման բողոքարկումը

Օրենքի 4 հոդվածի 6-րդ եւ 7 հոդվածի 6-րդ կետերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմքերով արտոնագիր չտալու մասին փորձաքննության որոշումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտատուին իրավունք ունի կրկնական փորձաքննության խնդրանքով դիմել գերատեսչություն:

Կրկնական փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում, Օրենքի 30 հոդվածի 13-րդ կետի համաձայն, որոշումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտատուին իրավունք ունի բողոք ներկայացնել գերատեսչության բողոքարկման խորհուրդ:

Կրկնական փորձաքննության կամ բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուին իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան:

2.9. Արդյունաբերական նմուշի արտոնագրումն օտարերկրյա պետություններում

Օրենքի 38 հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արդյունաբերական նմուշը կարող է արտոնագրվել օտարերկրյա պետություններում: Սակայն մինչեւ արդյունաբերական նմուշի հայտը օտարերկրյա պետություններ ներկայացնելը հայտատուին պարտավոր է այն ներկայացնել ՀՀ արտոնագրային գերատեսչություն, տեղեկացնելով նաեւ օտարերկրյա պետություններում այն արտոնագրելու մտադրության մասին (նշում կատարելով դիմումի ձեւաթղթի համապատասխան կետում):

Եթե նշված հաղորդումն ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում գերատեսչությունը, Օրենքի 4 հոդվածի 5-րդ կետով նախատեսված հիմքերով չի արգելում, ապա հայտը կարող է ներկայացվել օտարերկրյա պետություններ:

2.10. Արտոնագրային տուրքեր

Արտոնագրի հայտ ներկայացնելու, արտոնագիր ստանալու եւ այն գործողության մեջ պահելու, ինչպես նաեւ արտոնագրի հետ կապված այլ իրավաբանական նշանակություն ունե-

ցող գործողություններ կատարելու համար գանձվում են տուրքեր: Տուրքի տեսակները, դրանց չափն ու վճարման ժամկետները, տուրքի չափի նվազեցման կամ հետ վերադարձնելու հիմքերը եւ կարգը սահմանվում են Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով եւ «ՀՀ կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության կողմից արդյունաբերական սեփականության օբյեկտների եւ ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված պետական տուրքերի հաշվառման եւ գանձման կարգի մասին» հրահանգով (հաստատված գերատեսչության 1998թ. մայիսի 11-ի № 24 հրամանով):

ՄԱՍ 3. Հայտի քննարկումը գերատեսչությունում

3.1. Հայտի փաստաթղթերի ստացումը եւ դրանց գրանցումը

Գերատեսչություն ներկայացված հայտին, որին կցված է համապատասխան տուրքի վճարման անդորրագիրը, տրվում է գրանցման համար, եթե հայտն առնվազն պարունակում է հայտատուի անունը (անվանումը), դիմում՝ արտոնագիր տալու մասին, արդյունաբերական նմուշի լուսանկարները եւ նկարագրություն համարվող նյութերը: Եթե հայտում բացակայում է նշված տվյալներից կամ փաստաթղթերից որեւէ մեկը, կամ հայտին կից չի ներկայացվել տուրքի վճարման անդորրագիրը, ապա ներկայացված հայտը չի գրանցվում եւ վերադարձվում է հայտատուին:

Գերատեսչության կողմից հայտի նյութերի ստացումը եւ դրանց ստացման թվականը վավերացվում են հայտատուին տրվող ստացականի միջոցով, նշելով ստացված նյութերի ցանկը:

Գերատեսչության կողմից հայտին տրվում է գրանցման համար, հետեւյալ կոդավորմամբ՝ DCCYYXXXX, որտեղ՝ D-ն նշանակում է արդյունաբերական նմուշ (Design), առաջին չորս բարձր կարգի թվերը՝ CCYY-ը նշանակում է հայտի ներկայացման թվականը, մնացած չորս թվերը՝ XXXX-ը տվյալ տարում հայտի հերթական համարն է:

Գրանցված հայտը վերադարձման ենթակա չէ:

3.1.1. Հայտի ներկայացման համար սահմանված պետական տուրքի վճարման ստուգումը

Հայտը համարվում է գերատեսչություն ներկայացված, եթե դրանում առկա է հայտ ներկայացնելու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը (բնօրինակը):

Եթե հայտ ներկայացնելու համար տուրքը, արդյունաբերական նմուշի էական հատկանիշների ցանկում բերված տարբերակների քանակից ելնելով, վճարված է օրենքով սահմանված դրույքաչափից պակաս, ապա հայտատուին ծանուցագրով առաջարկվում է կամ կրճատել տարբերակների քանակը, կամ էլ մուծել տուրքի լրավճարը, համապատասխանեցնելով այն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերին:

Եթե պարզվում է տուրքի զեղչման համար հիմքի բացակայությունը, հայտատուն գրավոր ծանուցվում է լրացուցիչ տուրք վճարելու անհրաժեշտության մասին: Սահմանված գումարից ավելի պետական տուրքի վճարման մասին եւս հայտատուն տեղյակ է պահվում եւ վերջինիս ցանկությամբ եւ գրավոր դիմումի համաձայն, այդ գումարը կամ կարող է վերադարձվել, կամ էլ օգտագործվել հայտարկված արդյունաբերական նմուշի հայտով մեկ այլ իրավաբանական նշանակություն ունեցող գործողություն կատարելու համար:

3.2. Արդյունաբերական նմուշի հայտի փորձաքննությունը

3.2.1. Փորձաքննության խնդիրը

Փորձաքննության խնդիրը հայտի նյութերի համապատասխանության ստուգումն է օրենքով եւ սույն կանոններով սահմանված պահանջներին, առանց հայտի էությունը քննարկելու:

3.2.2. Փորձաքննության անցկացման ժամկետները

Օրենքի 30 հոդվածի 1-ին կետի համաձայն, արդյունաբերական նմուշի հայտի փորձա-

քննությունը գերատեսչությունն անցկացնում է այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում, օրենքի եւ սույն կարգի համաձայն:

Հարցում, ծանուցագիր (եւ այլն) ուղարկելու դեպքում այս ժամկետի հաշվարկը դադարեցվում է մինչեւ վերջիններիս պատասխանի ստացումը:

Սույն ժամկետն ավարտվելուց հետո փորձաքննությունը պարտավոր է հայտի վերաբերյալ որոշում կայացնել:

3.2.3. Հայտի փորձաքննության բովանդակությունը

Հայտի փորձաքննության ընթացքում ստուգվում են՝

ա) սահմանված պահանջների համաձայն ձեւակերպված՝ հայտի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը (Օրենքի 21 հոդվածի եւ սույն կանոնների 1.2.3 եւ 1.2.4 կետերի համաձայն):

բ) պետական տուրքի վճարման ճշտությունը:

գ) հայտարկված լուծման համապատասխանությունը արդյունաբերական նմուշի իրավական պահպանության պահանջներին (Օրենքի 4 հոդվածի 6-րդ եւ 7 հոդվածի 6-րդ կետերի եւ սույն կանոնների 1.1.4 կետի համաձայն):

դ) հայտարկված լուծման համապատասխանությունը արդյունաբերական նմուշի միասնության պահանջին (Օրենքի 21 հոդվածի 1-ին կետի եւ սույն կանոնների 1.1.3 կետի համաձայն):

ե) արդյո՞ք հայտատուի նախաձեռնությամբ փորձաքննության ընթացքում ներկայացված լրացուցիչ նյութերը չեն փոփոխում հայտարկված արդյունաբերական նմուշի էությունը եւ պահպանված է արդյոք դրանց ներկայացման կարգը:

զ) արդյունաբերական նմուշի դասակարգման ճշգրտումը ըստ ԱՆՄԴ գործող դասակարգչի (կամ դրա դասակարգումը, եթե դա հայտատուի կողմից արված չէ):

Հայտի փորձաքննության ընթացքում որոշվում է նաեւ արդյունաբերական նմուշի առաջնությունը, եթե այն խնդրարկվում է Օրենքի 22 հոդվածի 2 – 5-րդ կետերի համաձայն:

3.2.4. Արդյունաբերական նմուշի առաջնության որոշումը

Եթե հայտատուն խնդրարկում է ավելի վաղ առաջնություն, քան արդյունաբերական նմուշի հայտը գերատեսչություն ներկայացնելու թվականն է, ապա փորձաքննության ընթացքում ստուգվում է՝ պահպանված են արդյոք հայտատուի կողմից Օրենքի 22 հոդվածի 2–5-րդ կետերով սահմանված պահանջները:

3.2.4.1. Կոնվենցիայով առաջնության որոշումը

Եթե հայտատուի կողմից խնդրարկվում է կոնվենցիայով առաջնություն համաձայն Օրենքի 22 հոդվածի 2-րդ կետի, ապա փորձաքննության ընթացքում ստուգվում է՝

ա) կոնվենցիայով առաջնության խնդրարկման ժամկետի պահպանումը, այսինքն՝ այդ մասին տեղյակ պահելը հայտը գերատեսչություն ներկայացնելիս (հայտի դիմումում համապատասխան նշում կատարելով) կամ այդ թվականից սկսած 2 ամսվա ընթացքում:

բ) առաջնային հայտի պատճենի առկայությունը եւ դրա ներկայացման ժամկետի պահպանումը, այն է՝ հայտի հետ միաժամանակ կամ հայտի ներկայացման թվականից 3 ամսվա ընթացքում: Եթե առաջնային հայտերը մի քանիսն են, ապա նշված պայմանները պետք է պահպանվեն յուրաքանչյուր առաջնային հայտի նկատմամբ:

գ) կոնվենցիայով հայտի՝ գերատեսչություն ներկայացնելու 6-ամսյա ժամկետի պահպանումը, սկսած առաջնային հայտի ներկայացման թվականից: Եթե հայտը գերատեսչություն է ներկայացվել նշված 6-ամսյա ժամկետի խախտմամբ, ապա ստուգվում է, նշված են արդյո՞ք դիմումի մեջ հայտատուից անկախ այն պատճառները, որոնք խոչընդոտ են հանդիսացել նշված 6-ամսյա ժամկետում կոնվենցիայով հայտը ներկայացնելու համար:

դ) առաջնային հայտի նյութերում հայտի էության բացահայտված լինելը: Հակառակ դեպքում, փորձաքննությունը կարող է հայտի էությունը բացահայտող լրացուցիչ նյութեր պահանջել՝ պահպանելով օրենքով եւ սույն կանոններով սահմանված կարգը եւ ժամկետները:

3.2.4.2. Առաջնության որոշումը ավելի վաղ ներկայացված հայտի լրացուցիչ նյութերի ստացման թվականով

Եթե առաջնությունը խնդրարկվում է համաձայն Օրենքի 22 հոդվածի 3-րդ կետի՝ նույն հայտատուի ավելի վաղ ներկայացրած հայտի լրացուցիչ նյութերի ստացման թվականով, ապա փորձաքննության ընթացքում ստուգվում է հետևյալ պահանջների պահպանումը՝

ա) հայտը, որով խնդրարկվում է այդպիսի առաջնություն, պետք է գերատեսչություն ներկայացվի 3 ամսվա ընթացքում, հայտատուի կողմից այն ծանուցագրի ստացման օրվանից սկսած, որով հայտատուն տեղեկացվել է, որ սկզբնական հայտի նյութերում նկարագրված լուծման էությունը փոփոխելու պատճառով լրացուցիչ նյութերը չեն կարող հաշվի առնվել:

բ) հայտարկվող արդյունաբերական մոնոլի էությունը պետք է բացահայտված լինի հայտի լրացուցիչ նյութերում, որոնցով խնդրարկվում է այդպիսի առաջնություն:

Եթե հայտում բացահայտված չէ արդյունաբերական մոնոլի էությունը, ապա դրա առաջնության թվականը կհամընկնի այն լրացուցիչ նյութերի ստացման թվականի հետ, որոնցում այդ էությունը բացահայտվում է, ինչի մասին ծանուցվում է հայտատուին:

3.2.4.3. Առաջնության որոշումը ավելի վաղ ներկայացված հայտի ստացման թվականով

Եթե առաջնությունը խնդրարկվում է համաձայն Օրենքի 22 հոդվածի 4-6-րդ կետերի՝ նույն հայտատուի ավելի վաղ ներկայացրած արդյունաբերական մոնոլի էությունը բացահայտող հայտի ներկայացման թվականով, ապա փորձաքննության ընթացքում ստուգվում է հետևյալ պահանջների պահպանումը՝

ա) հայտը, որով պահանջվում է այդպիսի առաջնություն, պետք է գերատեսչություն ներկայացված լինի ավելի վաղ ներկայացված հայտի գրանցման օրվանից սկսած 12 ամսվա ընթացքում:

բ) հայտում պետք է բացահայտված լինի արդյունաբերական մոնոլի էությունը:

գ) առաջնությունը չի կարող որոշվել այն հայտի ներկայացման թվականով, որով արդեն պահանջվել է ավելի վաղ առաջնություն:

Առաջնությունը կարող է որոշվել ավելի վաղ ներկայացված հայտերով, եթե դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ պահպանված է վերը սահմանված կարգը:

Այդ դեպքում ավելի վաղ ներկայացված հայտը (հայտերը) համարվում է (են) հետ կանչված:

3.2.4.4. Չատված հայտերով արդյունաբերական մոնոլի առաջնության որոշումը

Եթե առաջնությունը խնդրարկվում է Օրենքի 22 հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ նույն հայտատուի արդյունաբերական մոնոլի սկզբնական հայտի ներկայացման թվականով՝ դրանից առանձնացված հայտի համար (զատված հայտ), ապա

ա) զատված հայտը պետք է ներկայացվի գերատեսչություն մինչև առաջնային հայտին արտոնագիր տալու մասին մերժման որոշման կայացումը (երբ դրա բողոքարկման հնարավորությունը սպառվել է) կամ արդյունաբերական մոնոլների Պետական գրանցամատյանում արդյունաբերական մոնոլի գրանցումը (եթե որոշում է կայացվել արտոնագիր տալու մասին):

բ) զատված հայտում նկարագրված արդյունաբերական մոնոլի էությունը պետք է բացահայտված լինի սկզբնական հայտի նյութերում, իսկ եթե հայտը զատվել է կոնվենցիայով հայտից եւ առաջնություն է խնդրարկվում կոնվենցիայով հայտի առաջնության թվականով՝ առաջնային հայտի նյութերում:

3.2.4.5. Մի քանի առաջնությունների որոշումը

Եթե արդյունաբերական մոնոլի տարբերակների համար գոյություն ունեն տարբեր ներկայացման թվականներ ունեցող մի քանի առաջնային հայտեր, որոնց հիման վրա կոնվենցիայով խնդրարկվում են տարբեր առաջնություններ, ապա ստուգվում է այդ առաջնային հայտերի վավերացված պատճենների առկայությունը, դրանց ներկայացման 6-ամսյա ժամկետի պահպանումը

եւ դրանցից յուրաքանչյուրի մեջ համապատասխան տարբերակի էության բացահայտումը: Եթե այդ հայտերում նշված չէ յուրաքանչյուր տարբերակի համար խնդրարկվող առաջնության թվականը, ապա որոշվում է, թե որ առաջնային հայտում որ տարբերակն է բացահայտված:

3.2.4.6. Արդյունաբերական մոնոլի առաջնության թվականը սահմանելու պայմանների պահպանման ստուգումը

Ավելի վաղ ներկայացվող հայտով, դրա լրացուցիչ նյութերով կամ զատված հայտերով առաջնության թվականի որոշումից առաջ պետք է համոզվել, որ հայտը, որի հիման վրա խնդրարկվում է առաջնություն, հետ կանչված չէ (կամ այդպիսին ճանաչված չէ):

Դրա համար ավելի վաղ ներկայացված հայտում (հայտերում), որով (որոնցով) առաջնություն է խնդրարկվում, հայտարկվող արդյունաբերական մոնոլի էության բացահայտված լինելը պարզելու համար ստուգվում է՝

ա) ավելի վաղ ներկայացված հայտի կամ դրա լրացուցիչ նյութերի կազմում ներկայացված լուսանկարների մեջ արդյո՞ք առկա են քննարկվող հայտով ներկայացված, արդյունաբերական մոնոլի լուսանկարներում արտապատկերված եւ էական հատկանիշների ցանկի մեջ մտնող բոլոր հատկանիշները.

բ) հաստատված է արդյոք արդյունաբերական մոնոլի բազմակի վերարտադրման հնարավորությունը արտադրվող իրի մեջ խնդրարկվող առաջնության թվականին՝ հաշվի առնելով ավելի վաղ ներկայացված հայտի կամ դրա լրացուցիչ նյութերում առկա նկարագրության բովանդակությունը:

Եթե արդյունաբերական մոնոլի առաջնությունը խնդրարկվում է այնպիսի հայտից զատված հայտով, որով պահանջվել է կոնվենցիայով առաջնություն, ապա վերը նշված պայմանների պահպանման դեպքում, դրա առաջնությունը որոշվում է կոնվենցիայով առաջնության թվականով (այլ ոչ թե հայտը գերատեսչություն ներկայացնելու թվականով):

Հայտատուի կողմից սույն կանոնների 3.2.4.1 – 3.2.4.4 կետերով սահմանված թեկուզ մի պահանջի խախտման դեպքում արդյունաբե-

րական մոնոլի առաջնությունը սահմանվում է հայտը գերատեսչություն ներկայացնելու թվականով:

Եթե առաջնության թվականի սահմանումից հետո հայտատուն ներկայացնում է արդյունաբերական մոնոլի էական հատկանիշների փոփոխված ցանկ, ապա կատարվում է խնդրարկվող առաջնության թվականի կրկնական ստուգում եւ հիմքերի առկայության դեպքում այդ թվականը կարող է փոխվել:

3.2.5. Հայտի պակաս կամ ճշգրտված փաստաթղթերի հարցումը

Եթե հայտի փորձաքննության ընթացքում պարզվում է, որ հայտը ձեւակերպված է դրա փաստաթղթերի նկատմամբ սահմանված պահանջների խախտումով, ապա Օրենքի 30 հոդվածի 4-րդ կետի համաձայն հայտատուին հարցում է ուղարկվում հայտի պակաս կամ ճշգրտված փաստաթղթերը դրա ստացման թվականից երկամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկով, բերելով իրավական բնույթի անհրաժեշտ փաստարկներ:

Հարցման համար հիմք կարող են ծառայել՝

ա) հայտի կազմի մեջ մտնող կամ դրան կցվող, սույն կանոնների 1.2.3 եւ 1.2.4 կետերով նախատեսված փաստաթղթերից թեկուզ մեկի բացակայությունը.

բ) տուրքերի վճարումների ճշտության հետ կապված հարցերի պարզաբանումը.

գ) արդյունաբերական մոնոլի սխալ անվանումը կամ դասակարգումը (ըստ ԱՆՄԴ գործող խմբագրության).

դ) ներկայացված փաստաթղթերի սխալ ձեւակերպումը եւ վավերացումը.

ե) հայտի փաստաթղթերի սահմանված քանակից պակաս ներկայացումը.

զ) հայտի փաստաթղթերում սույն կանոններով նախատեսված տեղեկությունների, տվյալների, ստորագրությունների, կնիքների եւ այլնի բացակայությունը.

է) ներկայացված փաստաթղթերի (զծագրեր, լուսանկարներ, նկարարագրություն եւ այլն) ձեւակերպման թերությունների հայտնաբերումը, ինչը կարող է խոչընդոտել դրանց ամփ-

ջական պատճենահանմանը, արտոնագիր տալու հետ կապված հրապարակմանը եւ այլն.

ը) նկարագրության մեջ սույն կանոններով նախատեսված բաժինների (թեկուզ մեկի) բացակայությունը.

թ) հայտի փաստաթղթերի միմյանց անհամապատասխանությունը (օրինակ՝ հայտի դիմումում բերված արդյունաբերական մոնոլի անվանումը չի համապատասխանում նկարագրության մեջ բերված անվանմանը. նկարագրության մեջ բացակայում են հատկանիշներ, որոնք նշված են եղել էական հատկանիշների ցանկի մեջ. էական հատկանիշների ցանկում բացակայում են հատկանիշներ, որոնք նշված են եղել նկարագրության մեջ. գծագրերը կամ լուսանկարները չեն համապատասխանում արդյունաբերական մոնոլի նկարագրությանը եւ այլն).

ժ) էական հատկանիշների ցանկում այդ հատկանիշների (լուսանկարներում արտապատկերված) բառային նկարագրության փոխարինումը դրանցով պայմանավորված գեղագիտական եւ/կամ էրգոնոմիական առանձնահատկություններով.

զ) հայտի փաստաթղթերի նկատմամբ օրենքի եւ սույն կանոնների պահանջների խախտման այլ դեպքեր, որոնք բացահայտվում են փորձաքննության ընթացքում, առանց հայտարկված արդյունաբերական մոնոլի էության վերլուծության:

Պակաս կամ ճշգրտված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ հայտատուին կարող են ուղարկվել մի շարք հարցումներ, մինչեւ թերությունների իսպառ վերացումը: Սահմանված ժամկետներում հայտատուն իր նախաձեռնությամբ կարող է լրացումներ, ուղղումներ եւ ճշտումներ մտցնել հայտի նյութերում:

Եթե հայտատուն սահմանված ժամկետում չի ներկայացնում խնդրարկվող փաստաթղթերը, չի պատասխանում հարցմանը կամ չի ներկայացնում դրա ներկայացման ժամկետի երկարաձգման մասին դիմում (դրա համար սահմանված պետական տուրքի վճարման անդորրագրով), ապա հայտը համարվում է հետ կանչված եւ դրա վերաբերյալ գրագրությունը դադարեցված, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:

3.2.6. Ծանուցում հայտի եւ (կամ) լրացուցիչ նյութերի՝ սահմանված պահանջներին չհամապատասխանելու մասին

Եթե հայտի քննարկման արդյունքում (առանց հայտարկված արդյունաբերական մոնոլի էության վերլուծության) պարզվի, որ հայտը ներկայացվել է միասնության պահանջի խախտմամբ, ապա Օրենքի 30 հոդվածի 5-րդ կետի եւ սույն կանոնների 1.1.2 կետի համաձայն հայտատուին այդ մասին ծանուցագիր է ուղարկվում եւ առաջարկվում է երկամսյա ժամկետում հայտնել, թե արդյունաբերական մոնոլներից որը պետք է քննարկվի եւ անհրաժեշտ ճշգրտումներ կատարել հայտի նյութերում:

Հայտարկված արդյունաբերական մոնոլի համապատասխանությունը միասնության պահանջին ստուգվում է լուսանկարներում արտացոլված եւ հայտի սկզբնական նյութերում բերված էական հատկանիշների ցանկի նկատմամբ: Եթե էական հատկանիշների ցանկը փոփոխվել է, ապա ստուգումը կատարվում է հայտատուի կողմից սահմանված կարգով ներկայացված՝ էական հատկանիշների ցանկի վերջին խմբագրության նկատմամբ:

Միասնության պահանջի խախտման մասին ծանուցագիրը նշված՝ երկամսյա ժամկետում հայտատուի կողմից անպատասխան թողնելու դեպքում, Օրենքի 30 հոդվածի 6-րդ կետի համաձայն քննարկվում է արդյունաբերական այն մոնոլը, որը նկարագրության մեջ բերված է առաջինը: Այս դեպքում հայտատուին ծանուցագիր է ուղարկվում հայտի նյութերում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ:

Եթե լրացուցիչ նյութերը լրիվ կամ մասնակիորեն փոփոխում են հայտարկված արդյունաբերական մոնոլի էությունը եւ/կամ ներկայացվել են սույն կանոնների 2.4 կետով նախատեսված դրույթների խախտմամբ, ապա հայտատուն ծանուցվում է այն մասին, որ լրացուցիչ նյութերի այն մասը, որը փոփոխում է ներկայացված արդյունաբերական մոնոլի էությունը, փորձաքննության ընթացքում հաշվի չի առնվում, եւ հայտատուն դա կարող է ձեւակերպել որպես առանձին հայտ:

3.2.7. Հայտի մասին տեղեկությունների գաղտնիության պահպանումը

Հայտի մասին տվյալները կամ տեղեկությունները, սկսած գերատեսչությունում հայտի ստացման թվականից, գաղտնի են պահվում եւ ենթակա չեն հրապարակման, մինչեւ դրանց մասին պաշտոնական տեղեկությունների հրապարակումը:

3.2.8. Արդյունաբերական նմուշի գաղտնիության բացահայտումը

Փորձաքննության ընթացքում պարզվում է, թե արդյո՞ք հայտարկվող արդյունաբերական նմուշը չի պատկանում գաղտնագրված արդյունաբերական նմուշների թվին:

Նման կասկածի դեպքում գերատեսչությունը ղեկավարվում է "Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին" ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության կողմից 1994թ. դեկտեմբերի 26-ի № 594 որոշմամբ հաստատված «Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների գաղտնագրման, օգտագործման եւ դրանց մասին տեղեկությունների հրապարակման» ժամանակավոր կարգի դրույթներով:

3.2.9. Արտոնագիր տալու մասին որոշում

Եթե արդյունաբերական նմուշի արտոնագիր խնդրարկելու հայտը պարունակում է բոլոր անհրաժեշտ եւ սույն կանոններով սահմանված պահանջներին համապատասխան ձեւակերպված փաստաթղթերը, եւ ներկայացված լուծումը վերաբերում է այն օբյեկտներին, որոնք Օրենքի 4 հոդվածի 6-րդ, 7 հոդվածի 6-րդ եւ 21 հոդվածի 1-ին կետերի համաձայն ենթակա են իրավական պահպանության, ապա որոշում է կայացվում արտոնագիր տալու մասին, հայտում բերված էական հատկանիշների ցանկով: Արտոնագիրը գործում է մինչեւ հայտը ներկայացնելու օրվանից 15 տարին լրանալը:

Տարբերակներ պարունակող արդյունաբերական նմուշի արտոնագիր տալու մասին որոշումը կայացվում է միայն այն դեպքում, եթե բոլոր

հայտարկված տարբերակները համապատասխանում են սույն կանոններով սահմանված պահանջներին:

Արտոնագիրը տրվում է հայտատուի պատասխանատվությամբ՝ առանց դրա իսկության երաշխիքի:

3.2.10. Արտոնագիր չտալու մասին որոշում

Եթե հայտի փորձաքննության արդյունքում պարզվի, որ ներկայացված արդյունաբերական նմուշը չի վերաբերում արտոնագրառնակ օբյեկտներին, ապա Օրենքի 30 հոդվածի 9-րդ կետի համաձայն որոշում է կայացվում արտոնագիր տալը մերժելու մասին, բերելով այն փաստարկները, որոնք հիմք են ծառայել նշված որոշումն ընդունելու համար:

Փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում, այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում, հայտատուն իրավունք ունի կրկնական փորձաքննության խնդրանքով դիմել գերատեսչություն:

Կրկնական փորձաքննությունն անցկացվում է դրա մասին դիմումն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Եթե նշված դիմումում հայտատուն հիմնավոր չի հերքել փորձաքննության փաստարկները, ապա կրկնական փորձաքննության արդյունքում գերատեսչությունը կայացնում է որոշում արտոնագիր չտալու մասին:

Կրկնական փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում, այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում, Օրենքի 30 հոդվածի 13-րդ կետի համաձայն, հայտատուն իրավունք ունի բողոք ներկայացնել գերատեսչության Բողոքարկման խորհուրդ:

Կրկնական փորձաքննության կամ Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան:

3.3. Արտոնագրի հանձնումը եւ դրա մասին տեղեկությունների հրապարակումը

Օրենքի 32 հոդվածի 1-ին կետի համաձայն արտոնագիր տալու մասին որոշման հիման

վրա, սահմանված տուրքի վճարման դեպքում, գերատեսչությունը արդյունաբերական նմուշը գրանցում է համապատասխան պետական գրանցամատյանում եւ տալիս արտոնագիր՝ ըստ գերատեսչության կողմից մշակված ձեւի եւ կարգի:

Դրա հետ միաժամանակ, գերատեսչությունն իր "Արդյունաբերական սեփականություն" պաշտոնական տեղեկագրում տեղեկություններ է հրապարակում արտոնագրված արդյունաբերական նմուշի մասին: Այդ տեղեկությունների պարտադիր ցանկը, որը կցվում է հայտի որոշմանը, հետեւյալն է.

	ծածկագրի №-ը
արտոնագրի համարը	(11)
հայտի գրանցման համարը	(21)
հայտի ստացման թվականը	(22)
առաջնային հայտի համարը	(32)
երկրի կողը, որտեղ ներկայացվել է	
առաջնային հայտը	(33)
արդյունաբերական նմուշի միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)	(51)
արդյունաբերական նմուշի անվանումը	(54)

արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)	(55)
էական հատկանիշների ամբողջությունը	(57)
հայտատուն (ները), երկրի կողը	(71)
հեղինակը (ները), երկրի կողը	(72)
արտոնագրատերը (ները),	
հասցեն, երկրի կողը	(73)
արտոնագրային հավատարմատարը	(74)
արդյունաբերական նմուշի հեղինակը, որը նաեւ հայտատու եւ արտոնագրատեր է, հասցեն, երկրի կողը	(76)

Օրենքի 8 հոդվածի 5 կետի համաձայն, հեղինակն իրավունք ունի արտոնագրի մասին հրապարակվող տեղեկատվության մեջ չհիշատակվել որպես հեղինակ: Այս դեպքում նա պետք է նշում կատարի հայտի դիմումի համապատասխան սյունակում:

Գրանցված է
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
06.12.2000թ., №30100147

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
 A1 Գյուտի հիմնական արտոնագիր
 A2 Գյուտի նախնական արտոնագիր
 B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24 արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
42 հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44 գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45 գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54 գյուտի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65 հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71 հայտատուն, երկրի կոդը
72 գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 7 A01N 25/32 (11) 1114 (13) A2
(21) P20010090 (22) 16.07.2001
(42) 17.10.2001
- (72) Վիլիկ Հարությունյան (AM), Տարիել Դոչիկյան, (AM), Աիդա Ավետիսյան (AM), Իրինա Կորպակովա (RU)
- (71) Սիջազգային գիտատեխնիկական կենտրոն, (RU), Երեւանի պետական համալսարան (AM)
- (73) Սիջազգային գիտատեխնիկական կենտրոն, Մոսկվա, Լուգանսկայա 9, փ/ա 25 (RU), Երեւանի պետական համալսարան, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)
- (54) **Ֆոսֆորօրգանական թունաքիմիկատների ազդեցությունը նվազեցնող միջոց**
- (57) Գյուտը վերաբերում է շրջակա միջավայրի պահպանման բնագավառին, մասնավորապես՝ հակաֆոսֆորօրգանական միջոցներին: Որպես ֆոսֆորօրգանական թունաքիմիկատների ազդեցությունը նվազեցնող միջոց կիրառում են 3-մեթիլ-4-(2-հիդրոպոլիկարբոնիլէթիլ)-2-պիրազոլին-5-ոնը (պիրազոլին-5): Նվազում է ֆոսֆորօրգանական թունաքիմիկատների ֆիտոտոքսիկ ազդեցությունը:
- (51) 7 A23G 3/30 (11) 1115 (13) A2
A61K 9/68
(21) P20010051 (22) 20.04.2001
(42) 18.07.2001
- (72) Վահրամ Գաբրիմալյան (AM)
- (71) Վահրամ Գաբրիմալյան (AM)
- (73) Վահրամ Գաբրիմալյան, Երեւան, Արցախի 1, բն. 32 (AM)
- (54) **Հականիկոտինային ծամոնի ստացման եղանակ**
- (57) Հականիկոտինային ծամոնի արտադրության համար օգտագործվող փափկեցված հիմքը 70-75°C ջերմաստիճանում խառնում են նախօրոք պատրաստված 96%-անոց էթիլային սպիրտի եւ դեղամիջոցի՝ անաբազին հիդրոքլորիդի՝ 11,3-11,8:1,0-1,05 հարաբերակցությամբ խառնուրդի հետ մինչեւ համասեռ զանգվածի ստանալը:

Չդադարեցնելով խառնումը, հերթականորեն ավելացնում են մաք, գլիցերին, կիտրոնաթթու, նարնջի հոտավետ նյութ՝ ամեն ավելացումից հետո խառնելով մինչեւ համասեռ զանգվածի ստացումը: Պրոցեսի վերջում չափաբաժիններով ավելացնում են շաքարի փոշի եւ յուրաքանչյուր չափաբաժինն ավելացնելուց հետո խառնում 50°C ջերմաստիճանում: Պատրաստի զանգվածը սառեցնում են եւ ձեւավորում: Դեղամիջոցներով հարստացված ծամոնների օգտագործման ժամանակ բարձրանում է մարդու օրգանիզմ դեղամիջոցի ներթափանցումը, ինչն ապահովում է անմիջական դեղաբուժական ներգործությունը:

- (51) 7 A24D 1/00 (11) 1116 (13) A2
(21) P20010096 (22) 31.07.2001
(42) 17.10.2001
- (72) Սիմոն Պողոսյան (AM)
- (71) Սիմոն Պողոսյան (AM)
- (73) Սիմոն Պողոսյան (AM)
- (74) Ա. Պետրոսյան
- (54) **Ինքնամարվող սիգարետ**
- (57) Ինքնամարվող սիգարետն ունի ծխախոտային թղթով փաթաթված ծխախոտային մաս, գտող մաս, չայրվող նյութ պարունակող պատիճ, որը տեղադրված է գտող մասում:
- Պատիճը պատրաստված է թաղանթագոյացնող նյութից: Որպես չայրվող նյութ օգտագործում են ածխաթթվի ածանցյալ կամ սիլիկաթթվի ածանցյալ կամ անօրգանական միացության բյուրեղա-հիդրատ, որոնք 30-150°C ջերմաստիճանում արտաթորում են սիգարետը մարելու համար անհրաժեշտ քանակության ածխածնի երկօքսիդ եւ/կամ ջուր: Որպես թաղանթագոյացնող օգտագործում են պոլիմերային նյութ՝ պոլիէթիլենգլիկոլ կամ դոնդողագոյացնող նյութ՝ դոնդողանյութ կամ սիլիկաժել: Պատիճը գնդաձեւ է, ունի 4,3-4,9 մմ տրամագիծ եւ 0,001-0,2 մմ հաստություն: 1 նկ.:

- (51) 7 A24D 1/10 (11) 1117 (13) A2
(21) P20010110 (22) 29.08.2001
(42) 20.11.2001
(72) Սիմոն Պողոսյան (AM)
(71) Սիմոն Պողոսյան (AM)
(73) Սիմոն Պողոսյան, Երևան, Թավրիզյան 46 (AM)
(54) **Ինքնամարվող սիգարետ**
(57) Գյուտը վերաբերում է ծխախոտի արտադրությանը, մասնավորապես, մարման հարմարանքով սիգարետներին:

Սիգարետն ունի ծխախոտային թղթով փաթակված ծխախոտային մաս եւ գտող մաս, որի մեջ տեղադրված է սիգարետը մարելու համար նախատեսված ներդիրը: Ներդիրը պատրաստված է սիլիկաթվի պինդ, չորացրած դոնդողից:

Պարզեցվում է ինքնամարվող սիգարետի պատրաստման տեխնոլոգիան: 1նկ.:

- (51) 7 A24F 47/00 (11) 1118 (13) A1
(21) 96270 (22) 10.09.1993
(86) PCT/US93/08457, 10.09.1993
(85) 14.08.1996
(31) 943 504 (32) 11.09.1992 (33) US
(72) Ալֆրեդ Լ.Քոլինգ (US), Մերի Էլեն Քաունթս (US), Ամիթաբ Դես (US), Սիթարամա Ս.Դիվայ (US), Գրիյեր Ս. Ֆլայշհաուեր (US), Մահամադ Ռ. Հաջալոգլ (US), Պատրիկ Հ. Հեյես (US), Չարլզ Թ. Հիգինս (US), Վիլլի Գ. Հուբ (կրտսեր) (US), Բիլլի Ջ. Կին (կրտսեր) (US), Բերնարդ Կ. Լերոյ (US), Ռոբերտ Ի. Լի (երրորդ) (US), Կլիֆթոն Ա. Լիլի (կրտսեր) (US), Պիտեր. Ջ. Լիպովից (US), Բրյուս Դ. Լոգի (կրտսեր) (US), Հյուգ Ջ. Մակքեֆերթի (US), Դոնալդ Ի. Մայգեր (US), Կոնսթանս Հ. Նիշուզ (US), Վին Ռ. Ռեյմոնդ (US), Ռոբերտ Լ. Ռիփլի (US), Ռենգեր Ռ. Ռիթ (ավագ) (US), Ռոբերտ Ջ. Սքոթ (US), Մյորֆի Ֆ. Սփրինգլ (US), Վիլյամ Հ. Սթիվենս (US), Մանթարամ Սարիահ (US), Ֆրենսիս Վ. Աթ (US), Մայքլ Լ.Վաթքինգ (US), Սյուզան Ի. Վրեն (US)
(71) ՖԻԼԻՊ ՄՈՐԻՍ ՓՐՈԴԱԿՏԻՍ ԻՆՔ. (US)
(73) ՖԻԼԻՊ ՄՈՐԻՍ ՓՐՈԴԱԿՏԻՍ ԻՆՔ. (US)
(74) Հ. Մանուկյան

- (54) **Սիգարետ (տարբերակներ), ծխելու սարք (տարբերակներ), վառիչ, տաքացնող տարր, տաքացնող տարրի պատրաստման եղանակ եւ տաքացնող հաստատուն բլոկ**

(57) Գյուտը վերաբերում է ծխելու համակարգերին, որոնցում օգտագործվում են վառիչներ ունեցող սիգարետներ, եւ դրանց պատրաստման եղանակներին:

Ծխելու էլեկտրական համակարգն ունի բուրավետ ծխախոտանյութ պարունակող փոխարինելի սիգարետ, որը ենթարկվում է էլեկտրական տաքացման՝ վառիչում գտնվող էլեկտրական տաքացնող տարրերի միջոցով: Համակարգն արտադրում է ծխախոտի բուրավետ ծուխ եւ այլ նյութեր՝ գոլորշու կամ անբոցոլի ձեւով, որը հասցվում է ծխողին:

Սիգարետն ու վառիչը ծխելու համակարգում ստեղծում են օդի լայնական հոսքեր: Այդպիսի հոսքերը նպաստում են անբոցոլի եւ բույրերի մատուցմանը ծխողին եւ նվազեցնում մնացորդային գոլորշիների եւ/կամ անբոցոլների կոնցենտրացիան համակարգում: Վառիչի տաքացնող տարրերն օգտագործվում են բազմակի: 8 անկախ կետ, 24 նկ.:

- (51) 7 A61F 2/00 (11) 1119 (13) A1
(21) 99038 (22) 26.04.1999
(42) 08.08.2000
(31) 09/072 846 (32) 05.05.1998 (33) US
(72) Յակոբ Ռիխտեր (IL), Գրեգորի Փինչասիք (IL)
(71) Մեդիմոլ Լթդ (IL)
(73) Մեդիմոլ Լթդ (IL)
(74) Հ. Դավթյան
(54) **Կողմնային ճյուղային անցքով երկատված ստենտ եւ դրա պատրաստման եղանակ (տարբերակներ)**
(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես, երկատված ստենտն արյունատար անոթ ներդնելուն:
Իրականացման տարբերակներից մեկի համաձայն առաջին թերթը ձեւավորված է առաջին խողովակաձեւ ոտքի տեսքով, երկրորդ թերթը՝ երկրորդ խողովակաձեւ ոտքի տեսքով, իսկ երրորդ թերթը՝ խողովակաձեւ բնի տեսքով: Երկու ոտքերն ամրացված են բնին: Համաձայն այլ տարբերակի առաջին թերթը ձեւավորված է առաջին մասի տեսքով, որն ունի առաջին ոտքը եւ բնի կեսը, երկրորդ թերթը

ձեւավորված է երկրորդ մասի տեսքով, որն ունի երկրորդ ոտքը եւ բնի կեսը: Բնի երկու կեսերը հավաքված են երկատված ստեմտ կազմելու համար:

Իրականացման երրորդ տարբերակի համաձայն, ստեմտն ունի երկու մաս, որոնք շարքով ներդրվում եւ հավաքվում են անոթի ներսում՝ բուժման ենթակա երկատման տեղում: 6 անկախ կետ, 31 նկար:

- | | | |
|----------------------------|-----------------|---------|
| (51) 7 A61F 2/00 | (11) 1120 | (13) A1 |
| (21) 99132 | (22) 20.12.1999 | |
| (42) 08.08.2000 | | |
| (31) 09/218503 | (32) 22.12.1998 | (33) US |
| 09/360415 | 23.07.1999 | US |
| (72) Գրեգորի Փինչասիք (IL) | | |
| (71) Մեդինոլ Լթդ. (IL) | | |
| (73) Մեդինոլ Լթդ. (IL) | | |
| (74) Հ. Դավթյան | | |

(54) Ստեմտը բալոնի վրա ամրացնելու սարք եւ եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ներանոթային ստեմտներին, որոնք ընդարձակվում են փչովի բալոնային կաթետերի միջոցով:

Սարքն ունի երկու սեղմող տարր, որոնք տեղադրված են մեկը մյուսին մոտեցնելու եւ հեռացնելու հնարավորությամբ: Յուրաքանչյուր սեղմող տարրն ունի փորվածք: Փորվածքները կազմում են ստեմտը սեղմող խողովակի երկայնական ուղի, որն ունի լայնական հատույթի փոփոխական ընտրովի տրամագիծ: Սեղմող տարրերը մոտեցնում են իրար եւ ճնշում գործադրելով ստեմտը սեղմող խողովակի արտաքին մակերեսույթի վրա, ստեմտն ամրացնում բալոնին:

Նվազեցվում է ստեմտի դեֆորմացիայի եւ անհամաչափ ընդարձակման հավանականությունը: 4 անկախ կետ, 19 նկ.:

- | | | |
|---|-----------------|---------|
| (51) 7 A61K 7/13 | (11) 1121 | (13) A2 |
| (21) P20010131 | (22) 25.10.2001 | |
| (42) 20.11.2001 | | |
| (72) Սվետլանա Գրիգորյան (AM) | | |
| (71) Սվետլանա Գրիգորյան (AM) | | |
| (73) Սվետլանա Գրիգորյան, Երեւան, Շահումյան 40/39 (AM) | | |

(54) Ներկող շամպուն ըստ Գրիգորյանի

(57) Գյուտը վերաբերում է մազերի խնամքի միջոցներին, մասնավորապես, ներկող շամպուններին:

Առաջարկվում է ներկող շամպուն, որը ներառում է էթիլային սպիրտ, հեղուկ օճառ եւ հաստնացած ընկույզի պտղապատյանի հյութ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ.%) . էթիլային սպիրտ 10-20, հեղուկ օճառ 12-20, հաստնացած ընկույզի պտղապատյանի հյութ 60-78:

Ապահովվում է ներկող շամպունների տեսականու ընդլայնումը:

- | | | |
|-------------------|-----------------|---------|
| (51) 7 A61K 39/02 | (11) 1122 | (13) A2 |
| (21) P20010134 | (22) 26.10.2001 | |
| (42) 20.11.2001 | | |

(72) Սլավա Ներսեսյան (AM), Հենրիկ Ոսկանյան (AM), Վալերի Միխալիշին (RU), Էդիկ Բաղդասարյան (AM), Խաչիկ Սարգսյան (AM), Կիմ Աբելյան (AM), Լիանա Սիմոնյան (AM), Սիմոն Բարսեղյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Ֆելիքս Առաքելյան (AM)

(71) «Անասնաբուժության եւ անասնաբուծության գիտական կենտրոն» ՊԲԲԸ (AM)

(73) «Անասնաբուժության եւ անասնաբուծության գիտական կենտրոն» ՊԲԲԸ (AM)

(74) Ա. Պետրոսյան

(54) Վիրուսային եւ մանրէական ծագում ունեցող հիվանդությունների կանխարգելման պատվաստանյութ

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ գյուղատնտեսական կենդանիների վիրուսային եւ մանրէային ծագում ունեցող հիվանդությունների կանխարգելման պատվաստանյութերին:

Պատվաստանյութը պարունակում է համապատասխան հակածին եւ կլանիչ-ադյուվանտ: Որպես կլանիչ-ադյուվանտ օգտագործում են Սարիգյուղի հանքավայրի բենտոնիտի 3-6 %-նոց դոնդողը:

Առաջարկվող պատվաստանյութը հնարավորություն է տալիս կրճատել հատիկուռուցքների ներծծման ժամկետը եւ ունի ցածր ինքնարժեք:

- (51) 7 **C05G 1/02** (11) **1123** (13) **A2**
C05B 21/00
 (21) P20010053 (22) 27.04.2001
 (42) 18.07.2001
- (72) Վլադիմիր Սահակյան (AM), Նիկոլայ Վարդանյան (AM), Լեոն Խանջյան (AM), Արկադի Յագուտյան (AM), Վազգեն Պողոսյան (AM), Կարեն Սահակյան (AM)
- (71) Վլադիմիր Սահակյան (AM), Նիկոլայ Վարդանյան (AM), Լեոն Խանջյան (AM), Արկադի Յագուտյան (AM), Վազգեն Պողոսյան (AM), Կարեն Սահակյան (AM)
- (73) Վլադիմիր Սահակյան, Երեւան, Բաղրամյան 56, բն. 40 (AM), Նիկոլայ Վարդանյան, Երեւան, Կողբացու 20, բն. 22 (AM), Լեոն Խանջյան, Երեւան, Սայաթ-Նովայի 6, բն. 20 (AM), Արկադի Յագուտյան, Երեւան, Խուդյակովի 24 (AM), Վազգեն Պողոսյան, Երեւան, Զաքյան 5 (AM), Կարեն Սահակյան, Երեւան, Բաղրամյան 56, բն. 40 (AM)
- (54) **Հանքային պարարտանյութ եւ դրա արտադրման եղանակ**
- (57) Պարարտանյութը պարունակում է հրաբխային խարամ, 0,15-5 մմ հատիկաչափական կազմով ցեփ, տորֆ, ամոնիումային բորակ եւ միկրոէլեմենտներ՝ բորի, մանգանի եւ մոլիբդենի միացություններ արտադրական թափոնների ձեւով:
- Պարարտանյութի արտադրման եղանակը կայանում է նրանում, որ բաղադրիչները չոր վիճակում լցնում են կուտակման բունկեր, որտեղից մատուցվում են չափակշռման սարքավորում, ապա տալիս են թիակավոր խառնիչին, որից պարարտանյութը դատարկում են պատրաստի արտադրանքի բունկեր: 2 նկ.: 2 անկախ կետ:
- (51) 7 **C07C 17/16** (11) **1124** (13) **A2**
C07C 21/067
C07C 21/22
 (21) P20010122 (22) 25.09.2001
 (42) 18.12.2001
- (72) Վիլի Հարությունյան (AM), Տարիել Ղուչիկյան (AM), Էդգար Հարությունյան (AM), Աիդա Ավետիսյան (AM)
- (71) Վիլի Հարությունյան (AM), Տարիել Ղուչիկյան (AM), Էդգար Հարությունյան (AM), Աիդա Ավետիսյան (AM)

- (73) Վիլի Հարությունյան, Երեւան, Քուչակի թաղ. 49, բն. 27 (AM), Տարիել Ղուչիկյան, Երեւան, Դավիթաշենի 1-ին թաղ. 48, բն. 62 (AM), Էդգար Հարությունյան, Երեւան, Քուչակի թաղ. 49, բն. 27 (AM), Աիդա Ավետիսյան, Երեւան, Սայաթ-Նովայի 7, բն. 49 (AM)
- (54) **Ալկիլ-, ալկենիլ- եւ ալկինիլըրիդների ստացման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ քլորտեղակալված հագեցած ածխաջրածինների ստացման եղանակին, որոնք կարող են կիրառվել օրգանական սինթեզում:
- Համապատասխան սպիրտները ենթարկում են թիոնիլըրիդի հետ փոխազդեցության կատալիզորդի առկայությամբ: Ընդ որում, որպես կատալիզորդ կիրառում են երկմեթիլֆորմամիդ, իսկ բաղադրամասերի մոլային հարաբերակցությունը 1:1: 0,019- 0,026 է:
- Պարզեցվում է եղանակը, բարձրանում է վերջանյութերի ելքը, բացառվում է օրգանական լուծիչների կիրառումը:

- (51) 7 **C07D 307/77** (11) **1125** (13) **A2**
C07D 307/93
 (21) P20010082 (22) 04.07.2001
 (42) 17.10.2001
- (72) Աիդա Ավետիսյան (AM), Արմենակ Մարգարյան (AM), Ռուզաննա Փիրիջանյան (AM), Գայանե Թոքմաջյան (AM)
- (71) Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (RU), Երեւանի պետական համալսարան (AM)
- (73) Միջազգային գիտատեխնիկական կենտրոն, Մոսկվա, Լուզանսկայա 9, փ/ա 25 (RU), Երեւանի պետական համալսարան, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM)
- (54) **Ցիկլապրոպանային օդակ պարունակող երկցիկլային լակտոնների ստացման եղանակ**
- (57) Ցիկլապրոպանային օդակ պարունակող երկցիկլային լակտոնները ստանում են բրոմալիլ խմբավորում պարունակող ֆունկցիոնալ տեղակալված չհագեցած լակտոնները ենթարկելով վերականգնողական ցիկլացման նատրիումի բորիդիդով քառահիդրոֆորանի միջավայրում: Եղանակը պարզ է եւ անվտանգ:

- (51) 7 **C08F 2/00** (11) **1126** (13) **A2**
 (21) P20010077 (22) 28.06.2001
 (42) 18.09.2001
 (72) Ջոյա Ֆարմազյան (AM), Դերենիկ Քարամյան (AM)
 (71) Ջոյա Ֆարմազյան (AM), Դերենիկ Քարամյան (AM)
 (73) Ջոյա Ֆարմազյան (AM), Դերենիկ Քարամյան (AM)
 (74) Ն. Թումանյան
 (54) **Վինիլային սպիրտի եւ մալեինաթթվի ածանցյալների համապոլիմերների ստացման եղանակ (տարբերակներ)**

(57) Գյուտը վերաբերում է չհագեցված կարբոնաթթուներով վերափոխված պոլիվինիլային սպիրտի ստացման եղանակներին եւ կարող է կիրառվել տեքստիլ, թաղանթների ու թելերի արդյունաբերությունում, բժշկության, կոսմետիկայի եւ այլ բնագավառներում:

Վինիլացետատը ենթարկում են մալեինաթթվի ածանցյալի՝ մալեինային անհիդրիդի հետ մեթանոլում ռադիկալային համապոլիմերացման եւ ստացված համապոլիմերը այնուհետեւ ենթարկում են հիմնային ալկոհոլիզի: Մալեինային անհիդրիդի խառնուրդը մեթանոլի հետ ներմուծում են ռեակցիայի համակարգ միանվագ, ժամանակի ցանկացած պահին, սկսած խառնուրդի պահից մինչեւ մալեինային անհիդրիդի լրիվ վերածումը մալեինաթթվի եթերի, կամ անմիջականորեն, առանց նախապես այն լուծելու մեթանոլում:

Ստացվում է պոլիվինիլային սպիրտ տարբեր ֆունկցիոնալ կազմով եւ, համապատասխանաբար, տարբեր հատկություններով: 2 անկախ կետ:

- (51) 7 **C09D 13/00** (11) **1127** (13) **A2**
 (21) P20010075 (22) 26.06.2001
 (42) 16.08.2001
 (72) Սանասար Դուբասարյան (AM), Հասմիկ Դերձյան (AM), Էմմա Նասիլյան (AM)
 (71) «Մխիթար Գոշ» Համալսարան ՍՊԸ (AM)
 (73) «Մխիթար Գոշ» Համալսարան ՍՊԸ, ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 30ա (AM)
 (54) **Կավճի ստացման բաղադրանյութ**
 (57) Գյուտը վերաբերում է ուսումնական պրոցեսում օգտագործվող կավճի ստացման բաղադրանյութերին: Բաղադրանյութը ներառում է չհանգած կիր, կավճի փոշի, գաջ եւ պոլիմերային հավելանյութ՝ նատրիում կարբօքսիլ մեթիլ ցելյուլոզի 1,1-1,4%-նոց ջրային լուծույթ, կամ պոլիվինիլալիրտի 1-2%-նոց

ջրային լուծույթ, կամ պոլիվինիլացետատային դիսպերսիայի 2-3%-նոց ջրային լուծույթ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգ. %).

<i>չհանգած կիր</i>	<i>10-25</i>
<i>կավճի ալյուր</i>	<i>50-60</i>
<i>գաջ</i>	<i>5-12</i>
<i>պոլիմերային հավելանյութ</i>	<i>20-28</i>

Բաղադրանյութը հեշտ է կաղապարվում, իսկ ստացված կավճը էկոլոգիապես մաքուր է եւ ունի բարձր ադհեզիոն եւ կոհեզիոն հատկություններ:

- (51) 7 **C11D 3/37** (11) **1128** (13) **A2**
C11D 11/00
C11D 17/06
 (21) P20010073 (22) 22.06.2001
 (42) 18.09.2001
 (72) Վլադիմիր Սահակյան (AM), Կարեն Սահակյան (AM), Արկադի Յագուտյան (AM), Լեոն Խանջյան (AM), Նիկոլայ Վարդանյան (AM)
 (71) Վլադիմիր Սահակյան (AM), Լեոն Խանջյան (AM)
 (73) Վլադիմիր Սահակյան, Երեւան, Բաղրամյան 56, բն. 40 (AM), Լեոն Խանջյան, Երեւան, Սայաթ Նովայի 6, բն. 20 (AM)
 (54) **Մաքրման եւ լվացման միջոցներ ցեոլիթի փոշու հիման վրա**
 (57) Մաքրող փոշին պարունակում է ցեոլիթի փոշի, ճարպաթթու, նատրիումի քլորիդ եւ հոտավորիչ՝ բաղադրիչների հետեւյալ հարաբերակցությամբ (կշռ. %).

<i>ցեոլիթի փոշի</i>	<i>85-90</i>
<i>ճարպաթթու</i>	<i>7-9</i>
<i>նատրիումի քլորիդ</i>	<i>3 – 5</i>
<i>հոտավորիչ</i>	<i>0,4-0,6</i>

Մածուկը պարունակում է ցեոլիթի փոշի, ճարպաթթու, նատրիումի քլորիդ, նատրիումի մեթաքսիլկատ, գլիցերին, հոտավորիչ եւ ջուր՝ բաղադրիչների հետեւյալ հարաբերակցությամբ (կշռ. %)

<i>ցեոլիթի փոշի</i>	<i>35-40</i>
<i>ճարպաթթու</i>	<i>12-18</i>
<i>նատրիումի քլորիդ</i>	<i>3-5</i>
<i>նատրիումի մեթաքսիլկատ</i>	<i>1-2</i>

զլիցերին 1,5-2,0
հոսքավորիչ 0,4-0,6
ջուր 45-50

Լվացքի փոշին պարունակում է ցելլոզի փոշի, ճարպաթու, նատրիումի մեթափոսֆատ, նատրիումի եռաբազմաֆոսֆատ եւ նատրիումի քլորիդ, հոտավորիչ՝ բաղադրիչների հետեւյալ հարաբերակցությամբ (կշռ.%)

ցելլոզի փոշի 55-60
ճարպաթու 33-37
նատրիումի եռաբազմաֆոսֆատ 3-5
նատրիումի մեթափոսֆատ 1-2
նատրիումի քլորիդ 1-2
հոտավորիչ 0,4-0,6

Մաքրման եւ լվացման միջոցները ապահովում են մաքրման բարձր աստիճան: 3 անկախ կետ:

- (51) 7 **D03D 29/00** (11) **1129** (13) **A2**
(21) P20010117 (22) 11.09.2001
(42) 20.11.2001
- (72) Գագիկ Կարապետյան (AM), Վիկտոր Մակարյան (AM), Սիեր Ռոստոմյան (AM), Քնարիկ Հարությունյան (AM)
- (71) Գագիկ Կարապետյան (AM), Վիկտոր Մակարյան (AM), Սիեր Ռոստոմյան (AM), Քնարիկ Հարությունյան (AM)
- (73) Գագիկ Կարապետյան, Երեւան, Բաշինջաղյան 121 (AM), Վիկտոր Մակարյան, Երեւան, Բաբայան 28, բն. 29 (AM), Սիեր Ռոստոմյան, Երեւան, Վարդանանց 5ա, բն. 275 (AM), Քնարիկ Հարությունյան, Երեւան, Գ. Մահարու 26 (AM)
- (54) **Չեռքի գորգագործական հաստոցների վրա հենքի տրված խտության ստացման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է ձեռագործ գորգերի պատրաստմանը, մասնավորապես՝ գորգագործական ուղղաձիգ հաստոցների վրա հենքի տրված խտության ստացման եղանակին:

Հենքի խտությունը որոշում են՝ կախված հաստոցի ստորին եւ վերին աշխատանքային լիսեռների միջեւ հեռավորության եւ ստորին լիսեռից մինչեւ հաստոցի փաթաթման մեխանիզմի ընթաց-

քային պտուտակը կինեմատիկական շղթայի փոխանցման հարաբերության մեծությունների փոխկապակցվածությունից: Ստորին լիսեռից մինչ հաստոցի փաթաթման մեխանիզմի ընթացքային պտուտակը կինեմատիկական շղթայի փոխանցման հարաբերությունը պահպանում են հաստատուն, իսկ ստորին եւ վերին աշխատանքային լիսեռների միջեւ հեռավորությունը փոփոխում են՝ կախված գորգի տրված խտությունից:

Ապահովվում է հենքի տրված խտությունը արագ, ճշգրիտ եւ սահուն կարգավորելու հնարավորությունը: 2 նկ.:

- (51) 7 **D03D 29/00** (11) **1130** (13) **A2**
D03D 13/00
(21) P20010158 (22) 11.12.2001
(42) 18.12.2001
- (72) Գագիկ Կարապետյան (AM)
- (71) Գագիկ Կարապետյան (AM)
- (73) Գագիկ Կարապետյան, Երեւան, Բաշինջաղյան 121 (AM)
- (54) **Չեռքի գորգագործական հաստոցի բացվածքազոյացման մեխանիզմ**
- (57) Գյուտը վերաբերում է ձեռագործ գորգերի պատրաստմանը, մասնավորապես՝ միջնաթելերի անցկացման համար բացվածքազոյացման մեխանիզմներին: Մեխանիզմն ունի հաստոցի իրանին ամրացված բարձակներ եւ դրանց վրա տեղակայված պտուտակային մեխանիզմներ, որոնց մանեկների վրա կալիչների եւ տռիների միջոցով տեղադրված են ուղղորդիչ կալիչները: Ուղղորդիչ կալիչների վրա հաջորդաբար դասավորված են բլոկաձեւ ազբակալիչները, որոնց վրա տեղակայված է ազբի թելանցքի թեքման անկյան սահուն կարգավորման սարք՝ հենքի թելերի առանցքի նկատմամբ:
- Բարձրացվում է մեխանիզմի կառուցվածքի հուսալիությունը, բարելավվում է շահագործման հարմարավետությունը: 3 նկ.:

- (51) 7 **E04B 5/16** (11) **1131** (13) **A2**
E04B 1/94
(21) P20010063 (22) 20.04.2001
(42) 18.07.2001
(86) PCT/EP00/06888, 19.07.2000
(85) 18.07.2001

(31) 199 33 400.5 (32) 20.07.1999 (33) DE

(72) Վալտեր Դեգելզեգեր (AT)

(71) Դորմա ԳմբՀ + Բն.ԿԳ(DE)

(73) Դորմա ԳմբՀ + Բն.ԿԳ(DE)

(74) Հ. Մանուկյան

(54) **Հակահրդեհային պատ**

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես՝ կրակի տարածումը կանխող հակահրդեհային պատերին:

Հակահրդեհային պատը բաղկացած է մոդուլներից, որոնց հիմնական մասը կազմում է առանձին պրոֆիլներից հավաքված շրջանակը, որն իրարից անջատում է երկու ապակիներ: Շրջանակի պրոֆիլը ընդգրկում է ապակիների եզրը: Ապակիներն ունեն շրջանակները քողարկող էմալի շերտ, իսկ մոդուլները ծածկված են հակահրդեհային լամինատով եւ միացված են իրար կապակցող տարրով:

Կոնստրուկցիան հուսալի է եւ բավարարում է ճարտարապետության ժամանակակից պահանջներին: 26 կ.:

(51) 7 E04C 1/10

(11) 1132 (13) A2

(21) P20010067

(22) 23.03.2001

(42) 18.09.2001

(72) Հենրի Պետրոսյան (AM), Մարատ Դաշտոյան (AM), Վահան Պետրոսյան, (AM)

(71) Հենրի Պետրոսյան (AM)

(73) Հենրի Պետրոսյան, Երեւան, Գյուլբենկյան 24, բն. 79 (AM)

(54) **Շինարարական քար**

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը ու շինանյութերի արտադրությանը եւ կարող է օգտագործվել սեյսմակայուն շինարարության մեջ:

Շինարարական քարի թիկնային մասն ունի ծիծեռնակի մեկ կամ մի քանի աստիճանի պոչի ձեւ: Ապահովվում է շարվածքում կցման անհրաժեշտ ամրությունը: 18 կ.:

(51) 7 E06B 5/00

(11) 1133 (13) A2

(21) P20010065

(22) 20.04.2001

(42) 18.07.2001

(86) PCT/EP00/06886, 19.07.2000

(85) 20.04.2001

(31) 199 33 406.4 (32) 21.07.1999 (33) DE

(72) Վալտեր Դեգելզեգեր (AT)

(71) Դորմա ԳմբՀ + Բն.ԿԳ (DE)

(73) Դորմա ԳմբՀ + Բն.ԿԳ (DE)

(74) Հ. Մանուկյան

(54) **Հակահրդեհային դուռ իրեն ընդգրկող շրջանակով**

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես՝ կրակի եւ ծխի տարածումը կանխող հակահրդեհային դռներին: Հակահրդեհային դուռն իրեն ընդգրկող արտաքին շրջանակով ունի առնվազն մեկ փեղկ, որն իրենից ներկայացնում է պրոֆիլներից կազմված, երկու ապակիներով ծածկված ներքին շրջանակ, ընդ որում ապակիները տարածվում են գրեթե մինչեւ փեղկի արտաքին եզրերը:

Հակահրդեհային դռն ներքին շրջանակը քողարկված է ապակիների հետ դրա հպման մասում գտնվող էմալի շերտով: Ապակիների միջեւ տեղադրված է բափանցիկ հակահրդեհային միջոց՝ հակահրդեհային գել կամ հակահրդեհային ապակի:

Դռան հակահրդեհայնությունը ապահովում է հակահրդեհային լամինատը, որով ծածկվում են ներքին շրջանակի պրոֆիլների արտաքին եզրերը:

Կոնստրուկցիան հուսալի է եւ բավարարում է ճարտարապետության ժամանակակից պահանջներին: 7 կ.:

(51) 7 E06B 5/16

(11) 1134 (13) A2

E06B 3/02**E06B 3/66**

(21) P20010064

(22) 20.04.2001

(42) 18.07.2001

(86) PCT/EP00/06884, 19.07.2000

(85) 20.04.2001

(31) 199 33410.2 (32) 20.07.1999 (33) DE

(72) Վալտեր Դեգելզեգեր (AT)

(71) Դորմա ԳմբՀ + Բն.ԿԳ (DE)

(73) Դորմա ԳմբՀ + Բն.ԿԳ (DE)

(74) Հ. Մանուկյան

(54) **Հակահրդեհային դուռ կամ հակահրդեհային պատուհան**

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես՝ կրակի եւ ծխի տարածումը կանխող հակահրդեհային դռներին կամ պատուհաններին:

Հակահրդեհային դուռը կամ հակահրդեհային պատուհանն ունի մոդուլային կառուցվածք եւ բաղկացած է առնվազն մեկ շարժուն փեղկից, որն իրենից ներկայացնում է դատարկ խցիկ ունեցող պրոֆիլներից կազմված, երկու ապակիներով ծածկ-

ված շրջանակ, ընդ որում, ապակիները տարածվում են գրեթե մինչև փեղկի արտաքին եզրը, իսկ շրջանակը քողարկված է ապակիների հետ դրա հպման մասում գտնվող էմալի շերտով: Ապակիների միջեւ եղած տարածությունը լցունվում է թափանցիկ հակահրդեհային նյութով: Կառուցվածքն ունի նաեւ հակահրդեհային լամինատ:

Միացնելով հիմնական մոդուլին լրացուցիչ պրոֆիլներ, հնարավոր է ստանալ դռան կամ պատուհանի այլ կառուցվածքներ:

Կոնստրուկցիան հուսալի է եւ բավարարում է ճարտարապետության ժամանակակից պահանջներին: 4նկ.:

(51) 7 **F16K 1/08** (11) **1135** (13) **A2**
E03C 1/08
(21) P20010119 (22) 13.09.2001
(42) 20.11.2001

(72) Լեոն Աբրահամյան (AM), Հայկ Հարությունյան (AM)

(71) Լեոն Աբրահամյան (AM)

(73) Լեոն Աբրահամյան, Երեւան, Խորենացու 29, նր. 67 (AM)

(54) **Հեղուկի կամ գազի փականի կառավարման սարք**

(57) Գյուտը վերաբերում է խողովակաշարային արմատորին, մասնավորապես բնակելի եւ ծառայողական շենքերի ջրաբաշխման սարքերում եւ հեղուկ կամ գազային վառելանյութի բաշխման համակարգերում:

Հեղուկի կամ գազի փականի կառավարման սարքն ունի հիմքասալ, որը ամրակցված է փականի իրանին, էլեկտրամագնիս, փականի գլխիկի ու էլեկտրամագնիսի հետ համագործակցող զսպանակած ձող, սեւեռիչ հղովակ, փականի բռնակ, որը զսպանակած է դարձի առանցքի նկատմամբ եւ ունի սեւեռվելու հնարավորություն բռնակի բաց կամ փակ վիճակում սեւեռիչ հղովակի միջոցով:

Փականի բացումը (փակումը) իրագործվում է էլեկտրամագնիսին տրվող համապատասխան տվիչներից ստացվող ազդանշանով:

Փականի կառավարման սարքը հնարավորություն է ընձեռում խողովակաշարի որոշակի վթարների դեպքում ապահովել հեղուկի (գազի) հոսքի ավտոմատ դադարեցումը: 3 նկ.:

(51) 7 **F26B 20/00** (11) **1136** (13) **A2**
(21) P20010081 (22) 03.07.2001
(42) 17.10.2001

(72) Գեղամ Սնապյան (AM), Արամ Պողոսյան (AM)

(71) Գեղամ Սնապյան (AM), Արամ Պողոսյան (AM)

(73) Գեղամ Սնապյան, Երեւան, Էրեբունու 11, բն. 37 (AM), Արամ Պողոսյան, Երեւան, 4-րդ գյուղ, 9-րդ փողոց, տուն 12 (AM)

(54) **Չորանոցային տեղակայանք**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես չորանոցային եւ ջերմոցային տեղակայանքներին:

Տեղակայանքը բաղկացած է «տաք արկղ» տիպի արեւային օդատաքացուցիչից, դրան օդատար խողովակներով եւ օդախառնիչներով միացած չորանոցային խցից, որում տեղադրված են էլեկտրական կամ արհեստական էներգամատակարարմամբ ապահովված ջերմափոխանակիչ մարտկոցներ եւ կարճաժամկետ հեղուկային ջերմակուտակիչ, ընդ որում արեւային օդատաքացուցիչի հատակը հանովի է:

Չորանոցային տեղակայանքի կառուցվածքը թույլ է տալիս չորանոցի հատակը հանելուց հետո չորանոցը վեր ածել ջերմոցի եւ օդատաքացուցիչի լուսաթափանց ծածկը օգտագործել որպես ջերմոցի լուսաթափանց ծածկ: 4 նկ.:

(51) 7 **G01N 33/14** (11) **1137** (13) **A2**
C12H 1/22
(21) P20010060 (22) 04.05.2001
(42) 16.08.2001

(72) Ալեքսանդր Փանոսյան (AM), Էմիլ Գաբրիելյան (AM), Խաչիկ Գետրգյան (AM)

(71) Ալեքսանդր Փանոսյան (AM), Էմիլ Գաբրիելյան (AM), Խաչիկ Գետրգյան (AM)

(73) Ալեքսանդր Փանոսյան (AM), Էմիլ Գաբրիելյան (AM), Խաչիկ Գետրգյան (AM)

(74) Մանուկյան Հ.

(54) **Փայտե տակառներում պահված սպիրտային խմիչքների տարիքի եւ որակի որոշման եղանակ**

(57) Սպիրտային խմիչքների տարիքը եւ որակը որոշելու համար խմիչքը ենթարկում են քիմիական անալիզի: Մազանոթային էլեկտրաֆորեզի եղանակով, դիոդային մատրիցով անդրամանուշակագույն դետեկտորի միջոցով որոշում են փայտանյութից

խմիչքի մեջ լուծահանված ֆենոլային ալդեհիդների՝ մարկերների պարունակությունը: Որպես մարկերներ օգտագործում են վանիլինը, եղրեւեանային, կոնիֆերիլային եւ սինապային ալդեհիդները:

Խմիչքի տարիքը հաշվարկում են հետևյալ բանաձևով՝

$$t = -1/k \ln (1-C/Co),$$

որտեղ՝ t -ն խմիչքի պահման տարիքն է, Co -ն՝ փայտանյութում ֆենոլային ալդեհիդի պարունակությունը լուծահանման ընթացքի սկզբում, C -ն՝ սպիրտային խմիչքում ֆենոլային ալդեհիդի պարունակությունը, k -ն հաստատուն գործակից է, հաշվարկված յուրաքանչյուր ֆենոլային ալդեհիդի համար, այնուհետև որոշում են չորս ալդեհիդների համար ստացված արժեքների միջինը եւ ըստ ստացված արժեքի գնահատում են խմիչքի որակը:

Պարզեցվում եւ ինտենսիվացվում է սպիրտային խմիչքների տարիքի եւ որակի որոշման եղանակը:

- (51) 7 **G01R 29/10** (11) **1138** (13) **A2**
 (21) P20010094 (22) 26.07.2001
 (42) 17.10.2001
 (72) Պարիս Հերունի (AM)
 (71) Պարիս Հերունի (AM)
 (73) Պարիս Հերունի, Երևան, Արամ Խաչատրյանի 1-ին նրբ. 4, բն. 37 (AM)
 (54) **Էլեկտրամագնիսական ալիքներ ցրող օբյեկտների ու անտենաների բնութագրերի որոշման եղանակ (տարբերակներ) ըստ Հերունու եւ այն իրականացնելու սարք (տարբերակներ)**
 (57) Գյուտը վերաբերում է ռադիոտեխնիկական չափումներին ու ռադիոլոկացիային եւ կարող է օգտագործվել անտենաների բնութագրերի ու տարբեր օբյեկտների տարածական պատկերի ստացման եւ նրանց ցրման արդյունավետ մակերեսի (ՑԱՄ) եւ նրա դիագրամների չափման համար ռադիոդաշտի բեւեռացման տարբեր դեպքերում:

Դաշտի չափման բոլոր գործողությունները կատարվում են օբյեկտի (այդ թվում՝ անտենայի) անմիջականորեն մոտ տարածքում, նրա մոտիկ զոնայում: Ճառագայթիչ եւ ընդունիչ անտենաները (զոնդերը) պտտվում են անշարժ (կամ պտտվող) օբյեկտի շուրջ տարբեր սֆերիկ մակերևույթներով, կամ շարժվում նրա դիմաց երկու զուգահեռ հարթ մակերես ույթներով: Ճառագայթիչ եւ ընդունիչ զոն-

դերի շարժումները փոխհամաձայնեցված են: Արդյունքում ընդունիչը գրանցում է օբյեկտի ցրած դաշտի ռադիոհոլոգրամը նրա մոտիկ զոնայում: Ռադիոհոլոգրամը ենթարկում են մաթեմատիկական ձեւափոխումների, ստանում դաշտի բաշխվածությունը հեռավոր զոնայում եւ այնուհետև որոշում ՑԱՄ-ը եւ այլ բնութագրերը: Եղանակը իրականացնող սարքն ունի ճառագայթիչ եւ ընդունիչ զոնդեր, գեներատոր, ընդունիչ, հաղորդիչ, կատարող մեխանիզմներ, համակարգիչ, կառավարման հանգույց:

Բարձրացվում է չափման ճշտությունը, կրճատվում տեղությունն ու արժեքը: 2 անկախ կետ, 33 նկ.:

- (51) 7 **G03B 21/62** (11) **1139** (13) **A2**
 (21) P20010121 (22) 18.09.2001
 (42) 20.11.2001
 (72) Ալեքսան Աբրահամյան (AM), Արմեն Դավթյան (AM), Լեւոն Իվանյան (AM)
 (71) Ալեքսան Աբրահամյան (AM), Արմեն Դավթյան (AM), Լեւոն Իվանյան (AM)
 (73) Ալեքսան Աբրահամյան (AM), Արմեն Դավթյան (AM), Լեւոն Իվանյան (AM)
 (74) Պետրոսյան Ա.
 (54) **Լուսարկունով պրոյեկտման էկրան**
 (57) Գյուտը վերաբերում է պրոյեկտման էկրաններին, մասնավորապես՝ լուսարկունով պրոյեկտման էկրաններին եւ կարող է օգտագործվել մեծ շոունների, շնորհանդեսների, կոնֆերանսների եւ այլ խոշոր միջոցառումների ժամանակ:
 Էկրանը բջջավոր է: Յուրաքանչյուր բջիջ ունի ճակատային, կիզակետիչ եւ լուսացրիչ շերտեր, որոնք տեղադրված են միմյանց նկատմամբ բացակով:

Ճակատային շերտն ունի լուսակլանիչ եւ լուսանցիկ հատվածամասեր, գունավորված է սև: Կիզակետիչ շերտը բջջավոր է եւ կազմված է կիզակետիչ ռապինյակներից, որոնց տրամագիծը մոտավորապես երեք անգամ փոքր է ճակատային շերտի լուսանցիկ հատվածամասի լայնությունից: Լուսացրիչ շերտը տեղակայված է բջջի հետեւի կողմից եւ պատրաստված է մետաքսե սպիտակ կտորից:

Պարզեցվում է էկրանի կառուցվածքը, նվազեցվում է ինքնարժեքը: 3 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական
տվյալների նույնականացման միջազգային
կոդերը ըստ ՄՄՀԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
Ս օգտակար մոդելի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
45 օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54 օգտակար մոդելի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 ռեֆերատը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71 հայտատուն, երկրի կոդը
72 օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 7 A24D 1/10 (11) 52 (13) U
 (21) U20020031 (22) 06.03.2002
 (72) Գեորգ Պորկշեյան (AM)
 (71) Գեորգ Պորկշեյան (AM)
 (73) Գեորգ Պորկշեյան, Երևան, Բաֆֆու 27/17 (AM)
 (54) **Ծխելու սարք**
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է ծխախոտի արտադրությանը:

Ծխելու սարքն ունի փաթաթվածքի մեջ տեղադրված ծխախոտային ու զտող մասեր եւ սնամեջ գլանաձեւ ականոց, որի ներքին տրամագիծը հավասար է սարքի արտաքին տրամագծին: Ականոցը պատրաստված է ջերմահաղորդ նյութից, տեղա-

դրված է ծխախոտային մասի վրա եւ ամբողջ իր ներքին մակերեսով կիպ նստեցված է սարքի արտաքին մակերեսին՝ սարքի երկայնակի առանցքի երկարությամբ տեղաշարժվելու հնարավորությամբ՝ ճիգ գործադրելով: Ականոցի երկարությունը կազմում է ծխախոտային մասի 0,2-0,5 մասը: Ծխելուց հետո, ճիգ գործադրելով, ականոցը տեղաշարժում են դեպի սարքի վառվող ծայրն այնպես, որ այն ամբողջությամբ գտնվի ականոցի մեջ:

Նվազեցվում է ծխախոտային ծխի վնասակար ազդեցությունը ծխողի օրգանիզմի վրա, հնարավոր է դառնում արագ եւ անծուխ հանգեցնել ծխելու սարքը: 5 նկ.:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
 - 13 փաստաթղթի տեսակի կոդը
S արդյունաբերական նմուշի արտոնագիր
 - 21 հայտի համարը
 - 22 հայտի ստացման թվականը
 - 23 ցուցահանդեսային առաջնության թվականը
 - 24 թվականը, որից սկսվում է ՀՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
 - 31 առաջնային հայտի համարը
 - 32 առաջնային հայտի ներկայացման թվականը
 - 33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
 - 51 արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը(ները)
 - 54 արդյունաբերական նմուշի անվանումը
 - 55 արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
 - 57 էական հատկանիշների ամբողջությունը
 - 71 հայտատու(ները), երկրի կոդը
 - 72 հեղինակը(ները), երկրի կոդը
 - 73 արտոնագրատերը(երը), հասցեն, երկրի կոդը
 - 74 արտոնագրային հավատարմատար
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 **07-01** (11) **54** (13) **S**
07-02
 (21) D20020001 (22) 12. 03. 02
 (72) Արմեն Մեհրաբյան (AM)
 (71) Արմեն Մեհրաբյան (AM)
 (73) Արմեն Մեհրաբյան, Երևան, Կոմիտասի 7-3,
 բն. 33 (AM)
 (54) **Թեյաման**
 (55)



(57) Յուրօրինակ, հին հայկական ճրագամանների նմանությամբ լուծված թեյաման (“ARMENTEA”), կազմված իրանից՝ քթիկով եւ ականջիկ-ամրակներով. կափարիչից եւ կոթից • վերելի եւ ներքելի կողմերից սեղմված (տափակացված) գնդի տեսքով իրան՝ այն գոտետորող կենտրոնական հորիզոնական ցցուն ակոսով բաժանված երկու հավասար մասերի, դրանց մակերեսային վրա տեղաբաշխված, կավի եւ արծնի գունավորված խառնուրդով պատված, շեշտված եզրագծերով քառանկյուն անկանոն պատկերների երկու շարքով • ծորակի մասում հորիզոնական ուղղությամբ հատված, եղջրաձեւ քթիկ • Պ-աձեւ բռնակով սնկաձեւ կափարիչ, կենտրոնում դեպի ներս կամարաձեւ խորացում ունեցող գլանաձեւ ոտիկին սահուն լծորդումով միացված կլոր գլխիկով • թեյամանի Պ-աձեւ կոթ, պատրաստված ջութե թելերով միմյանց եւ իրանի Պ-աձեւ ականջիկ-ամրակներից ամրացված խաղողի չորացած, անմշակ ոստերից • թեյամանի պատրաստումը հրակայուն անմշակ կավից, դրա ներքին մակերեսային ջնարակմամբ:

(51) 7 **09-03** (11) **55** (13) **S**
 (21) D20020003 (22) 12. 03. 02
 (72) Արմեն Մեհրաբյան (AM)
 (71) Արմեն Մեհրաբյան (AM)
 (73) Արմեն Մեհրաբյան, Երևան, Կոմիտասի 7-3,
 բն. 33 (AM)
 (54) **Թեյատուփ չափագդալի հետ**
 (55)



(57) Ուղղահայաց կողմնորոշմամբ, ուղիղ գուգահեռանիստի տեսքով թեյատուփ (“ANCIENT HERBALS”) • հետզցովի կափարիչ, փակված դրա առջելի եւ դիմային պատի վերելի մասերում արված անցքերով անցկացված եւ կապված, ծայրերը կնիքով ամրացված քաթանե թելով • տուփի միատերի գեղարվեստագծանկարչական ձեւավորումը՝ հայկական զարդանախշերով, գրություններով եւ այրված ծայրերով թղթե տեղեկաթերթիկով • տուփի համալրումը կարճ, գնդաձեւ ծայրով կոթով եւ թեքությամբ հատված կիսագլանի տեսքով շերտաձեւ չափագդալով • տուփի եւ չափագդալի պատրաստումը բնական փայտանյութից:

(51) 7 **09-03** (11) **56** (13) **S**
09-05
 (21) D20020004 (22) 12. 03. 02
 (72) Արմեն Մեհրաբյան (AM)
 (71) Արմեն Մեհրաբյան (AM)
 (73) Արմեն Մեհրաբյան, Երևան, Կոմիտասի 7-3,
 բն. 33 (AM)

- (54) Թեյատուփի թեյաքսակների հետ
(55)



(57) Ուղիղ գուգահեռանիստի տեսքով տուփ, հինգ հավասարամեծ, մույնական հատվածամասերի բաժանված ներքին ծավալով • ուղղանկյունաձև կափարիչ, ամրացված իրանին դրանց առջևի մասերում արված անցքերով անցկացված, ծայրերը զնուռտով կնքված քաթանե թելով եւ երկու արույրե եռանկյունաձև ամրակներով • տուփի ներքին բաժանմունքներում տեղադրված, թելով լցված, ձեռագործված հայկական գունավոր նախշազարդերով ձեւավորված քսակ-տուպրակներ, բերանները կապված հյուսված գունագեղ ժապավենաթելերով • կափարիչի հետեւի մասի մեջտեղում փակված, ծայրերը այրված (մագաղաթների նմանությամբ) թղթե տեղեկաթերթիկ • տուփի գծանկարչական լուծումն ամբողջացնող եւ թեյաքսակներն անհատականացնող ապրանքանիշերի (կնիքների տեսքով) եւ թեյատուփի անվանման (“ARMENIAN TEA SELECTION”) տպումը համապատասխանաբար բաժանմունքների դիմաց եւ կափարիչի վրա՝ դրանց դրսի կողմից • տուփերի համալրումը գունագեղ հուշաթերթիկով, վերելում տպագրված՝ “FROM GENE-

RATION TO GENERATION” (սերնդե-սերունդ) նշանաբանով եւ Հայաստանի քարտեզի ուրվագծի շուրջը անկանոն բաշխված ուղղանկյունների մեջ հայկական բնաշխարհի եւ բուսախոտերի հավաքումն ու մշակումը պատկերող նկարներով համապատասխան բացատրություններով • տուփի պատրաստումը բնական փայտից, իսկ քսակները՝ բնական ամուր կտորից (մասնավորապես՝ բյազից):

- (51) 7 09-03 (11) 57 (13) S
(21) D20020006 (22) 02. 04. 02
(72) «Կաֆե Մեզոն» ՍՊԸ (AM)
(71) «Կաֆե Մեզոն» ՍՊԸ (AM)
(73) «Կաֆե Մեզոն» ՍՊԸ, Երևան, Մ. Խորենացու 11, բն 10 (AM)

- (54) Սուրճի տուփ
(55)



(57) Սուրճի տուփի պատրաստումը բարակ ստվա-
րաթղթի ամբողջական փուլածքից • տուփի ծավա-
լատարածական լուծումը հարթ հիմքերով, ուռուցիկ
եւ գոգավոր մակերեսությունների հերթագայությամբ
ձեւավորված կողմնային մակերեսությամբ եւ բրգաձեւ
կափարիչով, ուղղահայաց զարգացած տնակի
նմանությամբ յուրօրինակ պատկերի տեսքով • ու-
ղիղ քառանկյուն պրիզմայի նմանությամբ իրան,
կազմված կենտրոնական հարթության նկատմամբ
սիմետրիկ երկու նույնական ծավալներից, որոնց
կողմնային մակերեսները կազմող ութական հա-
վասարակողմ եռանկյուններից չորսականը, կցված
լինելով հիմքի կողերով, կազմում են ուղղահայաց
տեղադրված, կենտրոնական գծով ներս սեղմված
չորս շեղանկյուններ, երկու կողմից շրջապատված
զազաթներով կցված երկուական եռանկյուններից
կազմված ուռուցիկ պատկերներով • տափակեց-
ված, ուղիղ կանոնավոր բուրգի տեսքով մուգ-
սրճագույն կափարիչ • տուփի գունագծանկարչա-
կան լուծումը բաց եւ մուգ սրճագույնի, բաց դարչ-
նագույնի եւ ոսկեգույնի ներդաշնակ գույնադրու-
թյամբ իրականացված հետեւյալ գրաֆիկական
պատկերներով եւ գրություններով՝

- իրանի մուգ սրճագույն շեղանկյունների կեն-
տրոններում՝ ոսկեգույն, ոճավորված փոքրատա-
ռերով կատարված ֆրանսերեն “Maison” (տուն),
դրանից ներքեւ՝ ստանդարտ մեծատառ տպատա-
ռերով՝ “PRESENT” (նվեր) բառերը, դրանցից վերեւ՝
ուղղանկյուն համակենտրոն շրջանակների մեջ
առնված գալարուն նախազարդեր.

